

Համաշխարհային փոստային կոնվենցիա

Միության անդամ երկրների Կառավարությունն[՞]ի ներքոստորագրյալ լիազորված ներկայացուցիչները 1964 թ. հալիսի 10-ին Վիեննայում ընդունված Համաշխարհային փոստային միության Կանոնադրության 22-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա սույն կոնվենցիայում մշակեցին կանոններ, որոնք փոխադարձ համաձայնությամբ և հիշյալ Կանոնա.րության 25-րդ հոդվածի 4-րդ կետում շարադրված պայմանով կիրառելի են Միջազգային փոստային ծառայության նկատմամբ:

Մաս առաջին

Միջազգային փոստային ծառայության նկատմամբ կիրառելի ընդհանուր կանոնները

Գլուխ միակ

Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

Համընդհանուր փոստային ծառայություն

1. Միության փոստային տարածքի միասնականություն հասկացության ամրապնդման նպատակով անդամ երկրները մեծ ու Կադրություն են դարձնում, որ բոլոր օգտագործողները/հաճախորդները իր 3 վունք ունենան օգտվելու համընդհանուր փոստային ծառայությունից, որը կհամապատասխաներ նրանց ամբողջ տարածքում մշտապես մատուցվող ընդունելի գներով հիմնական փոստային ծառայությունների առաջարկին:

2. Այդ նպատակով անդամ երկրները իրենց ազգային փոստային օրենսդրության շրջանակներում կամ այլ սովորական միջոցներով որոշում են համապատասխան փոստային ծառայությունների նշանակությունը, ինչպես, նաև որակի և ընդունելի գների պայմանները՝ հաշվի առնելով, միաժամայակ, բնակչության և իրենց ազգային պայմանների պահանջները:

#. Անդամ երկրները հատուկ ուշադրություն են դարձնում, որ փոստային առաջուր ունենալի մատուցումը և որակի ստանդարտները պահպանվեն այն օբեկտորն+րի կողմից, որոնց վրա դրված է համընդհանուր փոստային ծառայության Կատուցումը:

Հոդված 2

Տարանցման ազատություն

1. Տարանցման ազատության սկզբունքը շարադրված է Կանոնադրությամ առաջին հոդվածում: Ըստ այս սկզբունքի՝ յուրաքանչյուր Փոստային ադմինիստրացիա պարտավոր է միշտ առավել արագ ճանապարհներով և ամենահու.ալի միջոցների օգտագործմամբ, որոնք նա կիրառում է իր սեփական առաքումների համար, ուղարկել այն փակ ճեպագրերը և նամակագրական թղթակցություններ հաճախումները, որոնք ուղարկվում են բաց տարանցմամբ, և որ[©]նք նրան են փոխանցվում այլ Փոստային ադմինիստրացիայի կողմից:

2. Ա[©]դամ երկրները, որոնք չեն մասնակցում կենսաբանորեն արագ փչացող կամ ռադիոակտիվ նյութեր պարունակող նամակների փոխանակմանը, իրավունք ունեն թույլ չտալու այդ առաքումներն իրենց տարածքով՝ բաց տարանցմամբ: Սա վերաբերում է նաև նամակագրական թղթակցությունների առաքումներին՝ բացառությամբ այն նամակների, փոստային բացիկների և սեկոգրամների, որոնց նկատմամբ հատման երկրում անբավարար են դրանց հրատարակումը կամ շրջանառությունը կարգավորող օրինական դրույթները:

3. Վերգետնյա և ծովային ճանապարհներով ուղարկվող փոստային ծանրոցների տարանցման ազատությունը սահմանափակվում է այդ ծառայությանը մասնակից երկրների տարածքներով:

4. Ավիաժանրոցների տարանցման ազատությունը երաշխավորվում է Միության ողջ տարածքում: Սակայն այն անդամ երկրները, որոնք չեն մասնակցում փոստային ծանրոցների ծառայությանը, չեն կարող պարտավորված լինել՝ ապահովելու վերգետնյա ճանապարհով ավիաժանրոցների ուղարկումը:

5. Եթե որևէ անդամ երկիր չի պահպանում տարանցման ազատությանը վերաբերող դրույթները, ապա մյուս անդամ երկրներն իրավունք ունեն դադարեցնելու փոստային կապը այդ երկրի հետ:

Հոդված 3

Փոստային առաքանիների պատկանելությունը

1. Ցանկացած փոստային առաքանի պատկանում է ուղարկողին այնքան ժամանակ, քանի դեռ այն չի հանձնվել հասցեատիրոջը, եթե միայն այն չի կալանվել՝ համաձայն նշանակման երկրի օրենսդրության:

Հոդված 4

Նոր ծառայության կազմակերպումը

1. Ընդհանուր համաձայնությամբ Փոստային ադմինիստրացիաները կարող են կազմակերպել նոր ծառայություն, որը կոնկրետ չի նախատեսվել Միության Ակտերով: Նոր ծառայությանը վերաբերող սակագները սահմանվում են յուրաքանչյուր շահագրգիռ ադմինիստրացիայի կողմից՝ հաշվի առնելով ծառայության շահագործման ծախսերը:

Հոդված 5

Դրամական միավորը

1. Կանոնադրության 7-րդ հոդվածում նախատեսված և Կոնվենցիայում ու Միության այլ Ակտերում օգտագործվող դրամական միավորը Պարտավորության հատուկ իրավունքն է (ՊՀԻ):

Հոդված 6

Փոստային նամականիշները

1. Միայն Փոստային ադմինիստրացիաներն են թողարկում փոստային նամականիշներ, որոնք հաստատում են վճարումը՝ Միության Ակտերին համապատասխան: Փոստային վճարման նշումները, ֆրանկոմեթենաների դրոշմվածքները և տպագրական դրոշմվածքները կամ տպագրման կամ դրոշմադրման այլ եղանակով ստացվող դրոշմվածքները, որոնք համապատասխանում են Նամակագրական թղթակցության կանոնակարգին, կարող են օգտագործվել միայն Փոստային ադմինիստրացիայի թույլտվությամբ:

2. Փոստային նամականիշների թեման և բովանդակությունը պետք է համապատասխանեն ՀՓՄ Կանոնադրության նախաբանի ոգուն և Միության մարմինների ընդունած որոշումներին:

Հոդված 7

Սակագները

1. Միջազգային և հատուկ տարբեր փոստային ծառայություններին վերաբերող սակագները սահմանվում են Փոստային ադմինիստրացիաների կողմից՝ Կոնվենցիայում և Կանոնակարգերում շարադրված սկզբունքներին համապատասխան: Դրանք սկզբունքորեն պետք է կապված լինեն այդ ծառայությունների մատուցմանը համապատասխանող արժեքների հետ:

2. Կիրառվող սակագները, ներառյալ՝ Ակտերում, որպես կողմնորոշիչ բերված սակագներ, պետք է ծայրահեղ դեպքում հավասարվեն ներքին ռեժիմի առաքումների նկատմամբ կիրառվող սակագներին, որոնք ունեն նույն բնութագիրը (կարգը, քանակը, մշակման ժամկետը և այլն):

3. Փոստային ադմինիստրացիաներին թույլատրվում է գերազանցել բոլոր սակագները, որոնք բերված են Ակտերում, բացառությամբ այն սակագների, որոնք բերված չեն որպես կողմնորոշիչ՝

3.1. եթե սակագները, որոնք նրանք կիրառում են ներքին ռեժիմում նույն ծառայությունների համար, գերազանցում են սահմանվածները.

3.2. եթե դա անհրաժեշտ է իրենց ծառայությունների շահագործական ծախսերը հոգալու համար կամ ցանկացած այլ ողջամիտ պատճառով:

4. 2-րդ կետում սահմանված սակագների նվազագույն սահմանից ավելի՝ Փոստային ադմինիստրացիաներն իրավունք ունեն իրենց ներքին օրենսդրության հիման վրա տրամադրել նվազեցված սակագներ իրենց երկրում տրված նամակագրական թղթակցության առաքումների համար: Նրանք, մասնավորապես, իրավունք ունեն մեծ փոստային փոխանակում ունեցող իրենց հաճախորդներին տրամադրել զեղչ սակագներ:

5. Արգելվում է հաճախորդներից գանձել բազմապիսի փոստային սակագներ՝ բացի նրանցից, որոնք նախատեսված են Ակտերում:

6. Բացառությամբ Ակտերում նախատեսված դեպքերի՝ յուրաքանչյուր Փոստային ադմինիստրացիա հօգուտ իրեն է թողնում իր կողմից գանձված սակագները:

Հոդված 8

Անվճար առաքում

1. Սկզբունքը

1.1. Անվճար առաքման կոնկրետ դեպքերը նախատեսված են Կոնվենցիայով:

2. Ծառայողական նամակագրություն

2.1. Ծառայողական նամակագրությանը դասվող նամակագրական թղթակցության առաքումները, որոնք ուղարկվում են Փոստային ադմինիստրացիաների կամ նրանց հիմնարկների կողմից՝ ավիաճանապարհով կամ վերգետնյա ճանապարհով կամ մեկ անգամ էլ վերգետնյա ճանապարհով, և որոնք փոխադրվում են ավիաճանապարհով (S.A.L.), ազատվում են բոլոր փոստային գանձումներից:

2.2. Ազատվում են բոլոր փոստային սակագներից, բացառությամբ լրացուցիչ ավիասակագների, փոստային ծառայությանը վերաբերող այն նամակագրական թղթակցության առաքումները, որոնք՝

2.2.1. փոխանակվում են Համաշխարհային փոստային միության մարմինների և Տարածաշրջանային միությունների մարմինների միջև.

2.2.2. փոխանակվում են այդ Միությունների մարմինների միջև.

2.2.3. ուղարկվում են այդ մարմինների կողմից Փոստային ադմինիստրացիաներին կամ նրանց հիմնարկներին:

2.3. Ազատվում են բոլոր փոստային սակագներից փոստային ծառայությանը վերաբերող ծանրոցները, որոնցով միմյանց միջև փոխանակում են կատարում՝

2.3.1 Փոստային ադմինիստրացիաները.

2.3.2 Փոստային ադմինիստրացիաները և Միջազգային բյուրոն.

2.3.3 անդամ երկրների փոստային հիմնարկները.

2.3.4 փոստային հիմնարկները և Փոստային ադմինիստրացիաները:

2.4 Ավիաճանրոցների վրա, բացառությամբ Միջազգային բյուրոյից ուղարկվածների, լրացուցիչ ավիասակագները չեն կիրառվում:

3. Ռազմագերիները և բռնագաղթված քաղաքացիական անձինք

3.1. Ազատվում են բոլոր փոստային սակագներից, բացառությամբ լրացուցիչ ավիասակագների, փոստային ֆինանսական ծառայությունների այն նամակագրական թղթակցության առաքումները, փոստային ծանրոցները և առաքանիները, որոնք հասցեագրվում են ռազմագերիներին, կամ որոնք ուղարկվում են անմիջապես նրանց կողմից կամ Նամակագրական թղթակցության Կանոնակարգում նախատեսված հիմնարկների միջնորդությամբ: Պատերազմող կողմին պատկանող անձինք, որոնք ընդունվել և բռնագաղթել են չեզոք երկրում, հավասարեցվում են ռազմագերիներին՝ բառիս ուղղակի իմաստով, նախորդ դրույթների կիրառման առումով:

3.2. 3.1-ին կետում նախատեսված դրույթները կիրառվում են նաև փոստային ֆինանսական ծառայությունների կողմից ուղարկվող նամակագրական թղթակցության առաքումների, փոստային ծանրոցների և առաքանիների նկատմամբ, որոնք ուղարկվում են այլ երկրներից, և որոնք հասցեագրված են բռնագաղթած քաղաքացիական անձանց, որը նախատեսված է 1949 թվականի օգոստոսի 12-ի՝ Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին ժնկյան կոնվենցիայով, կամ անմիջապես նրանց կողմից առաքվող կամ Նամակագրական թղթակցության կանոնակարգում նախատեսված հիմնարկների միջոցով:

3.3. Նամակագրական թղթակցության կանոնակարգում նախատեսված հիմնարկները նույնպես օգտվում են ֆինանսական ծառայությունների նամակագրական թղթակցությունների առաքումների, փոստային ծանրոցների և առաքանիների անվճար առաքման իրավունքից այն դեպքում, երբ դրանք վերաբերում են 3.1-ին. և 3.2-րդ կետերում նշված անձանց՝ անկախ այն բանից՝ նրանք, անմիջապես կամ որպես միջնորդ, դրանք ուղարկո՞ւմ են, թե ստանո՞ւմ:

3.4. Անվճար փոստային առաքման են թույլատրվում մինչև 5 կգ քաշով ծանրոցները: Առավելագույն քաշն ավելացվում է մինչև 10 կգ այն ծանրոցների համար, որոնց ներդրանքն անբաժանելի է, և նրանց համար, որոնք հասցեագրված են նույն ճամբարին կամ նրա լիազորված անձանց՝ ռազմագերիների միջև բաշխելու նպատակով:

4. Սեկզրամներ

4.1. Սեկզրամներն ազատվում են բոլոր փոստային գանձումներից՝ բացառությամբ լրացուցիչ ավիասակագների:

Հոդված 9

Փոստային անվտանգությունը

1. Փոստային ադմինիստրացիաները փոստային շահագործման բոլոր մակարդակներում անվտանգության բնագավառում հաստատում և իրականացնում են գործողությունների ռազմավարություն, որպեսզի պահպանվի և բարձրացվի փոստային ծառայությունների նկատմամբ հաճախորդների վստահությունը, և այդպիսով շուկայում հասնեն մրցակցային առավելության:

2. Այդ ռազմավարությունը պետք է ունենա հետևյալ նպատակները.

2.1. բարելավել շահագործման ծառայության որակն ամբողջությամբ.

2.2. ծառայողները պետք է ավելի ու ավելի գիտակցեն անվտանգության նշանակությունը.

2.3. ստեղծել կամ ուժեղացնել անվտանգության ծառայությունները.

2.4. ապահովել շահագործմանը, անվտանգությանը և այդ բնագավառում անցկացվող հետաքննություններին վերաբերող տեղեկատվության ժամանակին առաքումը.

2.5. նպաստել, որ օրենսդիրներն ընդունեն օրենքներ, կանոններ և հատուկ միջոցներ՝ ուղղված աշխարհում փոստային ծառայությունների որակի բարձրացմանը և անվտանգության ամրապնդմանը:

Մաս երկրորդ

Նամակագրական թղթակցության և փոստային ծանրոցների նկատմամբ կիրառվող կանոնները

Գլուխ 1

Ծառայությունների մատուցումը

Հոդված 10

Հիմնական ծառայությունները

1. Փոստային ադմինիստրացիաներն ապահովում են նամակագրական թղթակցության առաքանիների ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումը: Նրանք նաև մատուցում են նույն ծառայությունները փոստային ծանրոցների համար՝ Կոնվենցիայի

դրույթների հիման վրա, կամ, ելից ծանրոցների դեպքում և երկկողմ համաձայնության առկայությամբ, իրենց հաճախորդների համար օգտագործելով ցանկացած առավել շահավետ միջոց:

2. Նամակագրական թղթակցության առաքումները դասակարգվում են հետևյալ երկու համակարգերից մեկին համապատասխան: Յուրաքանչյուր Փոստային ադմինիստրացիա ազատ է ընտրելու այն համակարգը, որն ինքը կիրառում է իր ելից փոխանակման համար:

3. Առաջին համակարգը հիմնվում է առաքումների մշակման արագության վրա: Այս դեպքում վերջինները բաժանվում են՝

3.1. առաջնահերթ առաքումներ՝ առաքումներ, որոնք փոխադրվում են ամենաարագ ճանապարհով (օդային կամ վերգետնյա), առաջնահերթ կարգով. քաշի սահմաններն են՝ սովորաբար 2 կիլոգրամ, բայց 5 կիլոգրամ՝ այն դեպքերում, երբ ադմինիստրացիաներն իրենց հաճախորդներից ընդունում են այս կարգի առաքումներ. 5 կիլոգրամ՝ գրքեր և գրքույկներ պարունակող առաքումների համար (ֆակուլտատիվ ծառայություն), 7 կիլոգրամ՝ սեկոգրամների համար.

3.2. ոչ առաջնահերթ առաքումներ՝ առաքումներ, որոնց համար ուղարկողն ընտրել է նվազ բարձր սակագներ, որը հանգեցնում է առաքման ավելի երկարատև ժամանակի. քաշի սահմաններն են՝ 3.1-ին կետում նշվածներից համարժեք:

4. Երկրորդ համակարգը հիմնվում է առաքումների ներդրանքի վրա: Այս դեպքում այս վերջինները բաժանվում են՝

4.1. մամակներ և փոստային բացիկներ, որոնք համատեղ անվանվում են «LC», քաշի սահմանն է՝ 2 կգ, բայց 5 կիլոգրամ՝ այն դեպքերում, երբ ադմինիստրացիաներն իրենց հաճախորդներից ընդունում են այս կարգի առաքումներ.

4.2. տպագիր հրատարակություններ, սեկոգրամներ և մանր փաթեթներ, որոնք համատեղ անվանվում են «AO». քաշի սահմաններն են՝ 2 կգ՝ փոքր փաթեթների համար, բայց 5 կիլոգրամ՝ այն դեպքերում, երբ ադմինիստրացիաները իրենց հաճախորդներից ընդունում են այս կարգի առաքումներ. 5 կիլոգրամ՝ տպագիր հրատարակությունների համար, 7 կիլոգրամ՝ սեկոգրամների համար:

5. Հատուկ պարկերը, որոնք պարունակում են տպագիր հրատարակություններ (թերթեր, պարբերականներ, գրքեր և այլ հրատարակություններ) նույն ստացողի հասցեով և նույն նշանակությամբ, երկու համակարգերում էլ կոչվում են «M պարկեր». առավելագույն քաշը՝ 30 կգ:

6. Ծանրոցների փոխանակումը, որոնցից յուրաքանչյուրի քաշը գերազանցում է 20 կգ-ը, ֆակուլտատիվ է. ընդ որում՝ յուրաքանչյուր ծանրոցի առավելագույն քաշը չի կարող գերազանցել 50 կգ-ը:

7. Որպես կանոն՝ ծանրոցները հասցեատերերին են հանձնվում ամենակարճ ժամկետում և նշանակման երկրում գործող դրույթներին համապատասխան: Եթե ծանրոցները հասցեատիրոջը տանը չեն հանձնվում, ապա հասցեատերերը անհապաղ պետք է ծանուցվեն դրանց ստացման մասին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհնար է:

8. Յանկացած երկիր, որի Փոստային ադմինիստրացիան իր վրա չի վերցնում ծանրոցների փոխադրումը, կարող է Կոնվենցիայի դրույթների կատարումը հանձնարարել տրանսպորտային ձեռնարկություններին: Միաժամանակ նա կարող է սահմանափակել այդ ծառայությունը այն ծանրոցներով, որոնք դուրս են գալիս կամ նշանակված են այն բնակավայրերը, որոնք սպասարկվում են այդ ձեռնարկությունների կողմից: Փոստային ադմինիստրացիան պատասխանատվություն է կրում Կոնվենցիայի և Փոստային ծանրոցների կանոնակարգի կատարման համար:

Հոդված 11

Վճարման սակագները և լրացուցիչ ավիասակագները

1. Տրման ադմինիստրացիան Միության ողջ տարածքում սահմանում է նամակագրական թղթակցության առաքումների ուղարկման համար վճարման սակագները: Վճարման սակագները ներառում են հասցեատերերին առաքանիները տանը հանձնելու արժեքը, եթե միայն նշանակման երկրներում կազմակերպված է հիշյալ առաքանիների հանձնման ծառայություն:

2. Նամակագրական թղթակցության առաջնահերթ առաքումների նկատմամբ կիրառվող սակագները ներառում են արագ առաքման հնարավոր լրացուցիչ արժեքը:

3. Ադմինիստրացիաները, որոնք կիրառում են նամակագրական թղթակցության առաքումների ներդրանքի վրա հիմնված համակարգը, իրավունք ունեն՝

3.1. գանձելու լրացուցիչ սակագներ նամակագրական թղթակցության ավիաառաքումների համար.

3.2. գանձելու վերգետնյա առաքումների համար, որոնք փոխադրվում են օդային ճանապարհով սահմանափակ առաջնահերթությամբ՝ «S.A.L.» առաքումներ, լրացուցիչ սակագներ. ավելի ցածր, քան ավիաառաքումների համար գանձվողներն են.

3.3. սահմանելու համակցված սակագներ ավիաառաքումների և «S.A.L.» փոստի վճարման համար՝ նկատի ունենալով դրանց փոստային ծառայությունների արժեքը և ավիաառաքման համար ծախսերը:

4. Ադմինիստրացիաները սահմանում են լրացուցիչ սակագներ, որոնք անհրաժեշտ է գանձել ավիածանրոցների համար:

5. Լրացուցիչ սակագները պետք է համապատասխանեն օդային փոխադրումների ծախսերին և միասնական լինեն միևնույն նշանակման երկրի ամբողջ տարածքի համար՝ անկախ օգտագործվող ուղղությունից. նամակագրական թղթակցության ավիաառաքումների համար լրացուցիչ սակագների հաշվարկի համար ադմինիստրացիաներին թույլատրվում է հաշվի առնել հաճախորդների կողմից օգտագործվող՝ հնարավոր կցվող ձևաթղթերի քաշը:

6. Տրման ադմինիստրացիան իրավունք ունի նամակագրական թղթակցության առաքման համար սահմանելու գեղչ, եթե այն պարունակում է՝

6.1. իր երկրում հրատարակվող թերթեր և պարբերականներ, որը, սկզբունքորեն, չի կարող գերազանցել օգտագործվող կարգի առաքումների համար կիրառվող սակագնի 50%-ը.

6.2. Գրքեր և գրքույկներ, նոտաներ և աշխարհագրական քարտեզներ, որոնք չեն պարունակում հայտարարություններ կամ գովազդներ, բացառությամբ այդ առաքումների շապիկի կամ տիտղոսաթերթի վրա տեղադրվածներից, նույն գեղչը, որը նախատեսված է 6.1-ին կետում:

7 Տրման ադմինիստրացիան իրավունք ունի ոչ ստանդարտ առաքումների համար կիրառելու այն ստանդարտ առաքումների համար կիրառվող սակագներից տարբերվող սակագները, որոնք սահմանված են Նամակագրական թղթակցության կանոնակարգում:

8. 6-րդ կետին համապատասխան սակագների նվազեցումը կիրառվում է նաև օդային ճանապարհով փոխադրվող առաքումների նկատմամբ, սակայն այդ տրանսպորտային ծախսերի ծածկմանն ուղղված սակագնի բաժնեմասի նկատմամբ չի կիրառվում ոչ մի նվազեցում:

Հոդված 12

Հատուկ սակագներ

1. 500 գ-ից ցածր քաշով մանր փաթեթների համար հասցեատիրոջից հանձնման համար չի կարող գանձվել ոչ մի սակագին: Եթե 500 գ-ից ավել քաշով մանր փաթեթի համար ներքին ռեժիմում հանձնման համար գանձվում է սակագին, նույն սակագինը կարող է գանձվել արտասահմանից ստացվող մանր փաթեթների համար:

2. Փոստային ադմինիստրացիաներին թույլատրվում է ներքոհիշյալ դեպքերում գանձել այն նույն սակագները, ինչ ներքին ռեժիմում.

2.1. Նամակագրական թղթակցության առաքման համար սակագին, որը տրվում է աշխատանքի սահմանված ժամերին. գանձվում է ուղարկողից:

2.2. Սակագին առաքման համար, որը տրվում է գործառնական պատուհանների աշխատանքի ավարտից հետո. գանձվում է ուղարկողից:

2.3. Սակագին առաքման համար, որը հանձնվում է տանը. գանձվում է ուղարկողից:

2.4. Սակագին նամակագրական թղթակցության առաքման համար, որը վերցվել է գործառնական պատուհանի աշխատանքի ավարտից հետո. գանձվում է հասցեատիրոջից:

2.5. Սակագին ցպահանջ հասցեագրված առաքման համար. գանձվում է հասցեատիրոջից. ծանրոցը ուղարկողին հետ վերադարձնելու կամ վերառաքելու դեպքում

գանձման գումարը չի կարող գերազանցել Փոստային ծանրոցների կանոնակարգով սահմանված գումարը:

2.6. Սակագին 500 գ-ից ավելի քաշով նամակագրական թղթակցության ցանկացած առաքման և ցանկացած ծանրոցի պահման համար, որը հասցեատերը չի ստացել նախատեսված ժամկետներում: Այս սակագինը չի կիրառվում սեկոգրամների նկատմամբ: Ծանրոցների նկատմամբ այս սակագինը գանձվում է հանձնումը կատարող ադմինիստրացիայի կողմից՝ հօգուտ այն ադմինիստրացիաների, որոնց ծառայությունում ծանրոցը պահվել է սահմանված ժամկետներից ավելի. ուղարկողին ծանրոցը հետ վերադարձնելու կամ այն վերառաքելու դեպքում գանձվող գումարը չի կարող գերազանցել Փոստային ծանրոցների կանոնակարգով սահմանված գումարը:

3. Այն դեպքերում, երբ ծանրոցը սովորաբար տանն է հանձնվում հասցեատիրոջը, ապա վերջինիցս հանձնման համար ոչ մի սակագին չի կարող գանձվել: Այն դեպքերում, երբ հասցեատիրոջը տանը հանձնում սովորաբար չի կատարվում, ապա ծանրոցը ստանալու մասին ծանուցագիրը պետք է հանձնվի անվճար: Այն դեպքում, եթե հասցեատիրոջը տանը հանձնումը կատարվում է ընտրովի, ի պատասխան ստացման մասին ծանուցագրի, ապա հասցեատիրոջից կարող է հանձնման համար գանձվել սակագին: Այս սակագինը պետք է հավասար լինի ներքին ծառայությունում կիրառվող սակագնին:

4. Ադմինիստրացիաները, որոնք համաձայնում են ֆորսմաժորային հանգամանքների հետևանքով առաջացած վնասների ծածկմանը, կարող են ծանրոցի համար գանձել սակագին ֆորսմաժորային հանգամանքների գործողության հետ կապված ռիսկի համար, որի առավելագույն գումարը սահմանվում է Կանոնակարգերում:

Հոդված 13

Պատվիրված առաքումներ

1. Նամակագրական թղթակցության առաքումները կարող են ուղարկվել պատվիրված կարգով:

2. Պատվիրված առաքումների համար սակագինը պետք է վճարվի նախապես: Այն բաղկացած է վճարման սակագնից և պատվերի համար սահմանված սակագնից, որի առավելագույն գումարը սահմանված է Նամակագրական թղթակցության կանոնակարգում:

3. Այն դեպքերում, երբ անհրաժեշտ են անվտանգության արտակարգ միջոցներ, Փոստային ադմինիստրացիաները կարող են ուղարկողներից կամ ստացողներից, բացի 2-րդ կետում նշված սակագնից, գանձել հատուկ սակագներ, որոնք նախատեսված են իրենց ներքին օրենսդրությամբ:

Հոդված 14

Վերահսկվող հանձնումով առաքումներ

1. Նամակագրական թղթակցության առաքումները վերահսկվող հանձնումով առաքումների ծառայության կողմից կարող են ուղարկվել այն ադմինիստրացիաների միջև, որոնք ունեն նման ծառայություն:

2. Վերահսկվող հանձնումով առաքումների համար սակագինը վճարվում է նախապես: Այն իր մեջ ներառում է վճարման սակագինը և վերահսկվող հանձնման համար սակագինը, որը սահմանված է տրման ադմինիստրացիայի կողմից: Այդ սակագինը պետք է ցածր լինի պատվիրված առաքման համար սակագնից:

Հոդված 15

Հայտարարված արժեքով առաքումներ

1. Առաջնահերթ և ոչ առաջնահերթ առաքումները և արժեթղթեր, փաստաթղթեր կամ արժեքավոր առարկաներ պարունակող նամակները, ինչպես նաև ծանրոցները կարող են փոխանակվել ուղարկողի կողմից հայտարարված գումարով՝ ներդրանքի ապահովագրման դեպքում: Այս փոխանակումը սահմանափակվում է այն անդամ երկրների միջև

հարաբերություններով, որոնց Փոստային ադմինիստրացիաները պայմանավորվել են այդ առաքումներն ընդունել կամ երկկողմանի, կամ միակողմանի փոխանակմամբ:

2. Հայտարարված արժեքի գումարը, սկզբունքորեն, սահմանափակված չէ: Յուրաքանչյուր ադմինիստրացիա իրավունք ունի իր հայեցողությամբ սահմանափակելու արժեքի հայտարարումը այն գումարով, որը չի կարող ցածր լինել Կանոնակարգերում սահմանված գումարներից: Այսուհանդերձ կարող է կիրառվել հայտարարված արժեքի սահման, որն ընդունված է ներքին ծառայությունում, եթե միայն այն հավասար է կամ գերազանցում է պատվիրված առաքանու կամ 1 կգ քաշով ծանրոցի կորստի համար սահմանված հատուցման գումարին: Առավելագույն գումարը հաղորդվում է Միության անդամ երկրներին ՀՓԻ-ներով:

3. Հայտարարված արժեքով առաքման համար սակագինը պետք է վճարվի նախապես: Այն կազմված է՝

3.1. նամակագրական թղթակցության առաքումների համար՝ հասարակ սակագնից, 13.2-րդ հոդվածում նախատեսված պատվերի համար սահմանված սակագնից և ապահովագրական գանձումից.

3.2. ծանրոցների համար՝ հիմնական սակագնից, ֆակուլտատիվ էքսպեդիցիոն գանձումից և սովորական ապահովագրական գանձումից. հիմնական սակագնի հետ մեկտեղ անհրաժեշտության դեպքում կարող են գանձվել լրացուցիչ ավիասակագներ և սակագներ հատուկ ծառայությունների համար. էքսպեդիցիոն գանձումը չի կարող գերազանցել նամակագրական թղթակցության պատվիրված առաքումների համար Կոնվենցիայում նախատեսված սակագինը:

4. Պատվիրված առաքման համար սահմանված սակագնի փոխարեն Փոստային ադմինիստրացիաներն իրավունք ունեն գանձելու սակագին, որը համապատասխանում է իրենց ներքին ծառայությանը, կամ, բացառիկ դեպքում, սակագին, որի առավելագույն չափը սահմանված է Նամակագրական թղթակցության կանոնակարգում:

5. Ապահովագրական գանձման առավելագույն չափը սահմանվում է Կանոնակարգերում:

5.1 Նամակագրական թղթակցության համար այս սակագինը կիրառվում է, անկախ նշանակման երկրից, նույնիսկ այն երկրներում, որոնք ենթակա են ֆորսմաժորային հանգամանքների հետ կապված ռիսկի:

5.2 Ծանրոցների համար ֆորսմաժորային հանգամանքների գործողության հետ կապված ռիսկի համար հնարավոր սակագինը պետք է սահմանվի այնպես, որ ընդհանուր գումարը, որը կազմված է այդ սակագնից և ապահովագրական գանձման համար հասարակ սակագնից, չգերազանցի ապահովագրական գանձման համար սակագնի առավելագույն գումարը:

6. Այն դեպքերում, երբ անհրաժեշտ են անվտանգության արտակարգ միջոցներ, ադմինիստրացիաները կարող են, բացի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված սակագներից, ուղարկողներից կամ ստացողներից գանձել հատուկ սակագներ, որոնք նախատեսված են իրենց ներքին օրենսդրությամբ:

7. Փոստային ադմինիստրացիաներն իրավունք ունեն իրենց հաճախորդներին տրամադրելու հայտարարված արժեքով առաքումների ծառայություն, որը համապատասխանում է այլ պայմանների, բացի սույն հոդվածում նշվածներից:

Հոդված 16

Վերադիր վճարով առաքումներ

1. Նամակագրական թղթակցության որոշ առաքումներ և ծանրոցներ կարող են ուղարկվել վերադիր վճարով: Վերադիր վճարով առաքումների փոխանակումը պահանջում է տրման և նշանակման ադմինիստրացիաների միջև նախնական համաձայնագրի կնքում:

Հոդված 17**Առձեռն առաքումներ**

1. Ուղարկողների խնդրանքով և այն երկրներում, որոնց ադմինիստրացիաները մատուցում են այդ ծառայությունները, առաքանիները հանձնման հիմնարկ հասնելուն պես հատուկ սուրհանդակի կողմից հասցվում են հասցեատիրոջ տուն: Յանկացած ադմինիստրացիա իրավունք ունի սահմանափակելու այս ծառայությունը առաջնահերթ առաքումներով, ավիաառաքումներով կամ, եթե խոսքը երկու ադմինիստրացիաների միջև օգտագործվող միակ ճանապարհի մասին է, LC վերերկրյա առաքումներով:

2. Ադմինիստրացիաները, որոնք տնօրինում են նամակագրական թղթակցությամբ փոստի առաքման մի քանի ուղիների, պետք է առձեռն առաքումները բաց թողնեն առաքման ամենաարագ ներքին ուղիով՝ դրանք ելից փոստի համար փոխանակման հիմնարկ մուտք լինելուց հետո, և այնուհետև մշակեն այդ առաքումները որքան հնարավոր է արագ:

3. Առձեռն առաքումների համար, բացի վճարման սակագնից, գանձվում է սակագին նվազագույն չափով հավասար հասարակ առաջնահերթ/ոչ առաջնահերթ առաքանու (կախված դեպքից) կամ հասարակ նամակի վճարման գումարին և առավելագույնը՝ հավասար Կանոնակարգերով սահմանված գումարին: Այդ սակագինը պետք է ամբողջությամբ վճարվի նախապես: Ծանրոցների համար այն հաշվարկվում է նույնիսկ այն դեպքում, եթե ծանրոցը չի կարող առաքվել առձեռն, այլ միայն՝ ստացման մասին ծանուցագրի օգնությամբ:

4. Եթե առձեռն առաքումն առաջացնում է հատուկ դժվարություններ, ապա կարող է գանձվել լրացուցիչ սակագին՝ ներքին ծառայությունում այդպիսի առաքումներին վերաբերող դրույթներին համապատասխան: Այս լրացուցիչ սակագինը պահանջվում է նաև ծանրոցների համար, եթե նույնիսկ ծանրոցը հետ է վերադարձվել ուղարկողին կամ վերառաքվել է. այս դեպքերում փոխհատուցման գումարը չի կարող, այսուհանդերձ, գերազանցել Փոստային ծանրոցների կանոնակարգով սահմանված առավելագույն գումարը:

5. Եթե նշանակման ադմինիստրացիայի կանոնները թույլ են տալիս, ապա հասցեատերերը կարող են խնդրել հանձնման հիմնարկին, որ իրենց համար նախատեսված առաքումներն իրենց հանձնվեն առձեռն՝ դրանք ստացվելուն պես: Այս դեպքում նշանակման ադմինիստրացիան իրավունք ունի հանձնելիս գանձել սակագին, որը կիրառվում է իր ներքին ծառայությունում:

Հոդված 18**Ծանուցագիր ստանալու մասին**

1. Պատվիրված առաքում, վերահսկվող հանձնումով առաքում, հայտարարված արժեքով ծանրոցներ կամ առաքումներ հանձնելիս ուղարկողը կարող է պահանջել հանձնման պահին իրեն տալ ստանալու մասին ծանուցագիր՝ վճարելով սակագին, որի առավելագույն գումարը սահմանվում է Կանոնակարգերով: Ստացման մասին ծանուցագիրը ուղարկողին միշտ վերադարձվում է փոստով և ամենաարագ ճանապարհով (ավիա կամ վերգետնյա):

2. Սակայն ծանրոցների համար ադմինիստրացիաները կարող են սահմանափակել հայտարարված արժեքով ծանրոցների այս ծառայությունը, եթե նման սահմանափակում նախատեսված է իրենց ներքին կանոններով:

Հոդված 19**Հանձնումն անձամբ հասցեատիրոջը**

1. Ուղարկողի խնդրանքով և իրենց համաձայնությունը հայտնած Փոստային ադմինիստրացիաների միջև հարաբերություններում պատվիրված առաքումները, վերահսկվող հանձնումով առաքումները և հայտարարված արժեքով առաքումները հանձնվում են առձեռն: Ադմինիստրացիաները կարող են այսպիսի հնարավորության մասին պայմանավորվել միայն նման կարգի առաքումների համար, որոնք ուղեկցվում են ստացման մասին ծանուցագրով: Բոլոր դեպքերում ուղարկողը վճարում է սակագին հասցեատիրոջը

անձամբ հանձնելու համար, որի առավելագույն գումարը սահմանված է Նամակագրական թղթակցության կանոնակարգով:

Հոդված 20

Առաքումներ առանց սակագների և գանձումների

1. Փոստային ադմինիստրացիաների միջև հարաբերություններում, որոնք համաձայնել են դրան, առաքողները կարող են իրենց վրա վերցնել, տրման հիմնարկներում նախապես դիմում տալու պայմանով, բոլոր սակագների և գանձումների վճարումը, որոնք դրվում են նամակագրական թղթակցության առաքումների և փոստային ծանրոցների վրա՝ դրանք հանձնելու ժամանակ: Քանի դեռ նամակագրական թղթակցության առաքանին չի հանձնվել ստացողին, ուղարկողը կարող է տալուց հետո պահանջել, որ առաքումը հանձնվի առանց սակագների և գանձումների գանձման:

2. Ուղարկողը պետք է իր վրա վերցնի բոլոր այն գումարը վճարելու պարտականությունը, որը կարող էր նշանակման հիմնարկը պահանջել հասցեատիրոջից: Անհրաժեշտության դեպքում նա պետք է կատարի նախնական վճարում:

3. Տրման ադմինիստրացիան ուղարկողից գանձում է սակագին, որի առավելագույն չափը սահմանվում է Կանոնակարգերով, և որը գանձվում է նրա կողմից որպես տրման երկրում ցուցաբերված ծառայությունների վարձավճար:

4. Այն դեպքում, երբ խնդրանքը տրվել է նամակագրական թղթակցության առաքանին տալուց հետո, տրման ադմինիստրացիան, բացի այդ, գանձում է լրացուցիչ սակագին, որի առավելագույն չափը սահմանված է Կանոնակարգով:

5. Նշանակման ադմինիստրացիան իրավունք ունի յուրաքանչյուր առաքման համար գանձելու կոմիսիոն վճար, որի առավելագույն չափը սահմանված է Կանոնակարգերում: Այս վճարը գանձվում է անկախ մաքսատանը առաքումը ներկայացնելու համար գանձումից: Այն գանձվում է ուղարկողից՝ հոգուտ նշանակման ադմինիստրացիայի: Յուրաքանչյուր Փոստային ադմինիստրացիա իրավունք ունի սահմանափակելու սակագների ու գանձումների գանձման ոչ ենթակա նամակագրական թղթակցության առաքումների և հայտարարված արժեքով առաքումների առաքման ծառայությունը:

Հոդված 21

Պատասխանով միջազգային առևտրային թղթակցության ծառայությունը

1. Փոստային ադմինիստրացիաները կարող են միմյանց հետ պայմանավորվել ֆակուլտատիվ ծառայությանը մասնակցելու մասին, որն անվանվում է «Պատասխանով միջազգային առևտրային թղթակցություն (ՊՄԱԹ/CCRI)»: Բայց բոլոր ադմինիստրացիաները պարտավոր են մատուցել ՊՄԱԹ առաքումների հետ վերադարձման ծառայությունը:

Հոդված 22

Միջազգային փոխադարձ կտրոններ

1. Փոստային ադմինիստրացիաներն իրավունք ունեն վաճառելու Միջազգային բյուրոյի կողմից թողարկվող՝ միջազգային փոխադարձ կտրոններ և սահմանափակելու դրանց վաճառքը՝ իրենց ներքին օրենսդրության համապատասխան:

2. Փոխադարձ կտրոնի արժեքը սահմանվում է Նամակագրական թղթակցության կանոնակարգում: Շահագրգիռ Փոստային ադմինիստրացիաների կողմից սահմանված վաճառքի գինը չի կարող ցածր լինել այդ արժեքից:

3. Փոխադարձ կտրոնները ցանկացած անդամ երկրում փոխանակվում են փոստային նամականիշների և, եթե փոխանակման երկրի ներքին օրենսդրությունը չի արգելում, վճարման ամբողջ փոստային նիշերի կամ փոստային վճարման նիշերի կամ դրոշմների հետ, որոնք իրենցից ներկայացնում են նամակագրական թղթակցություն հասարակ առաջնահերթ առաքման կամ արտասահման հասցեագրված հասարակ ավիանամակի նվազագույն վճար:

4. Բացի այդ՝ անդամ երկրի Փոստային ադմինիստրացիան կարող է իրավունք վերապահել իրեն պահանջելու փոխադարձ կտրոնների և վճարման ենթակա առաքումների միաժամանակյա հանձնում՝ ի փոխանակում այդ փոխադարձ կտրոնների:

Հոդված 23

Փխրուն ծանրոցներ: Խոշորաչափ ծանրոցներ

1. «Փխրուն ծանրոց» է կոչվում ցանկացած ծանրոց, որը պարունակում է հեշտությամբ կտրվող առարկաներ, և որին վերաբերվելը պահանջում է առանձնահատուկ զգուշություն:

2. «Խոշորաչափ ծանրոց» է կոչվում ցանկացած ծանրոց՝

2.1. որի չափսերը գերազանցում են Փոստային ծանրոցների կանոնակարգում սահմանված չափսերը կամ այն չափսերը, որոնք ադմինիստրացիաները կարող են սահմանել փոխադարձ փոխանակման ժամանակ.

2.2. որն իր ձևի կամ կառուցվածքի պատճառով չի կարող հեշտությամբ բարձվել մյուս ծանրոցների հետ միասին կամ պահանջում է առանձնահատուկ զգուշություն:

3. Փխրուն և խոշորաչափ ծանրոցների համար գանձվում է լրացուցիչ սակագին, որի առավելագույն գումարը նշված է Փոստային ծանրոցների կանոնակարգում: Եթե ծանրոցը փխրուն է կամ խոշորաչափ, ապա լրացուցիչ սակագինը գանձվում է միայն մեկ անգամ: Սակայն այդ ծանրոցների համար լրացուցիչ ավիասակագները ենթակա չեն ոչ մի ավելացման:

4. Փխրուն և խոշորաչափ ծանրոցների փոխանակումը կատարվում է միայն այն ադմինիստրացիաների միջև, որոնք այդ ծանրոցները թույլատրում են առաքման:

Հոդված 24

«Կոնսիգնացիա» խմբավորված առաքումների ծառայությունը

1. Փոստային ադմինիստրացիաները կարող են միմյանց հետ պայմանավորվել մասնակցել «Կոնսիգնացիա» անվանումով խմբավորված առաքումների ֆակուլտատիվ ծառայությունը այն առաքումների համար, որոնք խմբավորված են մեկ ուղարկողի կողմից՝ արտասահման առաքելու համար:

2. Հնարավորության սահմաններում այդ ծառայությունը նույնացվում է Փոստային ծանրոցների կանոնակարգում սահմանված լոգոտիպով:

3. Այդ ծառայության վերաբերյալ մանրամասները երկկողմ կարգով սահմանվում են տրման և նշանակման ադմինիստրացիաների միջև՝ Փոստային շահագործման խորհրդի կողմից սահմանված դրույթների հիման վրա:

Հոդված 25

Զբույլատրվող առաքանիներ: Արգելքներ

1. Առաքանիները, որոնք չեն համապատասխանում Կոնվենցիայով և Կանոնակարգերով պահանջվող պայմաններին, չեն թույլատրվում առաքման:

2. Բացի Կանոնակարգերում նախատեսված բացառություններից՝ արգելվում է ներքոհիշյալ առարկաների ներգրավումը բոլոր կարգի առաքումների մեջ՝

2.1. թմրանյութեր և հոգեմետ նյութեր.

2.2. պայթուցիկ, բռնկուն կամ այլ վտանգավոր նյութեր, ինչպես նաև ռադիոակտիվ նյութեր.

2.2.1. այս արգելքի տակ չեն ընկնում՝

2.2.1.1. 44-րդ հոդվածում հիշատակվող կենսաբանական նյութերը, որոնք ուղարկվում են նամակագրական թղթակցության առաքանիներում.

2.2.1.2. 26-րդ հոդվածում հիշատակվող ռադիոակտիվ նյութերը, որոնք ուղարկվում են նամակագրական թղթակցության առաքանիներում և փոստային ծանրոցներում.

2.3 անվայելուչ կամ անբարոյական բնույթի առարկաները.

2.4. կենդանի կենդանիները՝ բացառությամբ 3-րդ կետում նախատեսված բացառություններից.

2.5. այն առարկաները, որոնց ներկրումը կամ շրջանառությունն արգելված են նշանակման երկրում.

2.6. այն առարկաները, որոնք իրենց բնույթով կամ փաթեթավորմամբ կարող են վտանգ ներկայացնել փոստային աշխատողների համար, աղտոտել կամ փչացնել մյուս առաքանիները կամ փոստային սարքավորումները.

2.7. այն փաստաթղթերը, որոնք ունեն ընթացիկ և անձնական գրագրության բնույթ, ինչպես նաև ամեն տեսակի թղթակցությունները, որոնք փոխանակվում են ուղարկող և ստացող կամ նրանց հետ բնակվող չհանդիսացող անձինք:

3. Այսուհանդերձ, թույլատրվում է՝

3.1 նամակագրական թղթակցության առաքանիներում հետևյալ ներդրանքը՝ բացառությամբ հայտարարված արժեքով առաքումներից՝

3.1.1. մեղուներ, տզրուկներ և շերամորդեր.

3.1.2. մակաբույծներ և վնասակար միջատներ ոչնչացնողներ, որոնք նախատեսված են այդ միջատների հետագոտման համար, և որոնք փոխանակվում են պաշտոնապես ճանաչված հիմնարկների միջև.

3.2. ծանրոցներում՝ կենդանի կենդանիներ, որոնց առաքումը փոստով թույլատրված է շահագրգիռ երկրների փոստային կանոններով:

4. Արգելվում է փոստային ծանրոցների մեջ դնել հետևյալ առարկաները՝

4.1. արդիական և անձնական գրագրության բնույթ ունեցող փաստաթղթերը, որոնք փոխանակվում են ուղարկողի և ստացողի կամ նրանց հետ բնակվող անձանց միջև.

4.2. ցանկացած բնույթի թղթակցություն, որը փոխանակվում է անձանց միջև՝ բացառությամբ ուղարկողի և ստացողի կամ նրանց հետ բնակվող անձանց:

5. Արգելվում է ներդնել մանրադրամ, բանկային տոմսեր, վարկային տոմսեր կամ ցպահանջ ինչ-որ արժեքներ, ճանապարհային վճարագրեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ զարդերի կամ անմշակ տեսքով, թանկարժեք քարեր, ոսկերչական արտադրանք և այլ թանկարժեք առարկաներ.

5.1 առանց հայտարարված արժեքով նամակագրական թղթակցության առաքանիներում. սակայն եթե տրման և նշանակման երկրի ներքին օրենսդրությունը թույլատրում է, ապա այս առարկաները կարող են առաքվել փակ ծրարով՝ որպես պատվիրված առաքանիներ.

5.2. առանց հայտարարված արժեքով ծանրոցներում, որոնք փոխանակվում են երկու երկրների միջև, որոնք թույլ են տալիս արժեքի հայտարարում. ավելին, յուրաքանչյուր աղմինիստրացիա իրավունք ունի արգելելու ոսկու ձուլակտորների ներդրանքը հայտարարված արժեքով կամ առանց հայտարարված արժեքի ծանրոցներում, որոնք ուղարկվում կամ ստացվում են իր տարածքում կամ առաքված են տարանցմամբ՝ իր տարածքով. նա կարող է սահմանափակել այդ առաքումների իրական արժեքը:

6. Տպագիր արտադրանքը և սեկոգրամները՝

6.1. չեն կարող ունենալ ոչ մի անտացիա, ոչ էլ՝ պարունակել ընթացիկ և անձնական գրագրության բնույթի որևէ փաստաթուղթ.

6.2. չեն կարող պարունակել ոչ մի նամականիշ, վճարման ձևաթղթեր՝ կնքված կամ ոչ, արժեք ներկայացնող որևէ փաստաթուղթ:

7. Միալմամբ ընդունված առաքանիների մշակումը սահմանվում է Կանոնակարգերում: Դրա հետ մեկտեղ 2.1-ին, 2.2-րդ և 2.3-րդ կետերում թվարկված առարկաների՝ ներդրանքով առաքումները ոչ մի դեպքում ենթակա չեն ոչ ըստ նշանակման հանձնման, ոչ հասցեատիրոջը հանձնման, ոչ էլ՝ տրման վայր հետ վերադարձնելու:

Հոդված 26

Ռադիոակտիվ նյութեր

1. Համապատասխան Կանոնակարգերի հիման վրա ձևավորված և փաթեթավորված ռադիոակտիվ նյութերի առաքման թույլատրումը սահմանափակվում է երկու Փոստային աղմինիստրացիաների միջև կապերով, որոնք հայտարարել են այդ առաքումները

թույլատրելու իրենց համաձայնության մասին, կամ՝ իրենց փոխադարձ կապերում, կամ՝ մեկ ուղղությամբ:

2. Երբ ռադիոակտիվ նյութերն առաքվում են նամակագրական թղթակցության առաքանիներում, դրանց համար գանձվում է առաջնահերթ առաքումների սակագին կամ նամակների և պատվերի համար սակագին:

3. Նամակագրական թղթակցության առաքանիներում կամ փոստային ծանրոցներում պարունակվող ռադիոակտիվ նյութերը պետք է առաքվեն ամենաարագ ճանապարհով, սովորաբար՝ օդային ճանապարհով՝ համապատասխան լրացուցիչ ավիասակագները վճարելու պայմանով:

4. Ռադիոակտիվ նյութերը կարող են ուղարկվել միայն համապատասխան թույլտվություն ունեցող ուղարկողների կողմից:

Հոդված 27

Վերառաքում

1. Ստացողի հասցեի փոփոխման դեպքում առաքանիները նրան վերառաքվում են անհապաղ՝ Կանոնակարգերում սահմանված պայմաններով:

2. Առաքանիները, սակայն, չեն վերառաքվում՝

2.1. եթե ուղարկողն արգելել է դրանց վերառաքումը՝ այդ մասին կատարելով նշում նշանակման երկրում հայտնի լեզվով.

2.2. եթե դրանք ստացողի հասցեի վերևում ունեն «կամ այդ հասցեում բնակվող ցանկացած անձի» նշումը:

3. Փոստային ադմինիստրացիաներին, որոնք իրենց ներքին ծառայությունում գանձում են վճար վերառաքման մասին հայտարարության համար, թույլատրվում է գանձել նույնպիսի վճար միջազգային ծառայության մեջ:

4. Նամակագրական թղթակցության հանձնման ոչ ենթակա առաքանիների՝ մի երկրից մյուսը վերառաքման համար չի գանձվում որևէ լրացուցիչ սակագին՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են Կանոնակարգում: Սակայն ադմինիստրացիաներին, որոնք իրենց ներքին ծառայությունում վերառաքման համար գանձում են սակագին, թույլատրվում է գանձել նույնպիսի սակագին միջազգային ծառայության նամակագրական թղթակցության այն առաքումների համար, որոնք վերառաքվում են իրենց սեփական ծառայությունում:

Հոդված 28

Հանձնման ոչ ենթակա առաքումներ

1. Փոստային ադմինիստրացիաներն սպահովում են այն առաքումների հետ վերադարձը, որոնք ինչ-որ պատճառով չեն հանձնվել հասցեատերերին:

2. Առաքումների պահման ժամկետը սահմանվում է Կանոնակարգերում:

3. Ցանկացած ծանրոց, որը չի կարող հանձնվել հասցեատիրոջը կամ ծառայողական կարգով պահվել է, պետք է մշակվի այն հրահանգների հիման վրա, որոնք տրվում են ուղարկողի կողմից Փոստային ծանրոցների կանոնակարգով սահմանված սահմաններում:

4. Եթե ուղարկողը հրաժարվել է ծանրոցից, որը չէր կարող հանձնվել հասցեատիրոջը, ապա այս ծանրոցի հետ նշանակման ադմինիստրացիան վարվում է իր ներքին օրենսդրության համապատասխան: Ոչ առաքողը, ոչ մյուս Փոստային ադմինիստրացիաները պարտավոր չեն վճարել փոստային սակագներ, մաքսային և այլ գանձումներ, որոնք կարող էին գանձվել ծանրոցի համար:

5. Ծանրոցում պարունակվող առարկաներից, առանց նախնական ծանուցման և իրավաբանական ձևակերպումների, կարող են անհապաղ վաճառվել միայն արագ փշանալու կամ նեխելու ենթակա առարկաները: Վաճառքը կատարվում է հօգուտ նրա, ով ունի դրա իրավունքը, նույնիսկ՝ ճանապարհին (ուղիղ և հակառակ ուղղություններով): Եթե վաճառքն անհնարին է, ապա փշացած կամ նեխած առարկաները ոչնչացվում են:

6. Ոչ մի լրացուցիչ սակագին չի գանձվում հանձնման ոչ ենթակա նամակագրական թղթակցության առաքանիների համար, որոնք վերադարձվում են տրման երկիր, բացի

Կանոնակարգում նախատեսված բացառություններից: Սակայն իրենց ներքին ծառայությունում վերադարձի համար սակագին գանձող ադմինիստրացիաներին թույլատրվում է գանձել այդ նույն սակագինը իրենց վերադարձվող միջազգային ռեժիմի առաքումների համար:

7. Չնայած 6-րդ կետի դրույթներին, երբ ադմինիստրացիաները ուղարկողին վերադարձնելու համար ստանում են այնպիսի առաքումներ, որոնք տրված են իրենց տարածքում ապրող հաճախորդների կողմից՝ արտասահմանում, նրանք իրավունք ունեն ուղարկողից կամ ուղարկողներից յուրաքանչյուր առաքանու մշակման համար գանձելու սակագին, որը չի գերազանցում այն վճարման սակագինը, որը կարող էր ստացվել, եթե առաքանին հանձնվեր այն ադմինիստրացիաներին, որոնց մասին հիշատակվում է:

7.1. 7-րդ կետի դրույթներին համաձայն՝ ուղարկող կամ ուղարկողներ են այն անձը (անձինք) կամ ստորաբաժանումը, որի (որոնց) անվանումը նշված է հետադարձ հասցեում կամ հետադարձ հասցեներում:

Հոդված 29

Վերադարձը: Հասցեի փոփոխումը կամ ճշտումը ուղարկողի խնդրանքով

1. Նամակագրական թղթակցություն ուղարկողը կարող է խնդրել դրա վերադարձման, հասցեի փոփոխության կամ ճշտման մասին Կանոնակարգում սահմանված պայմաններով:

2. Յուրաքանչյուր Փոստային ադմինիստրացիա պարտավոր է ընդունել մեկ այլ ադմինիստրացիայի ծառայությունում տրվող ցանկացած նամակագրական թղթակցության առաքանու վերադարձման, հասցեի փոփոխման կամ ճշտման մասին դիմումը, եթե դա թույլատրվում է իր օրենսդրությամբ:

3. Յուրաքանչյուր դիմումի համար ուղարկողը պետք է վճարի հատուկ սակագին, որի առավելագույն գումարը սահմանված է Կանոնակարգերում:

4. Ծանրոց ուղարկողը կարող է խնդրել իրեն վերադարձնել ծանրոցը կամ դրա վրա փոխել հասցեն: Նա պետք է երաշխավորի գումարների վճարումը, որոնք կարող են պահանջվել յուրաքանչյուր նոր առաքման համար:

5. Սակայն ադմինիստրացիաներն իրավունք ունեն չընդունելու 4-րդ կետում նշված դիմումները, եթե իրենք դրանք չեն ընդունում իրենց ներքին ծառայություններում:

Հոդված 30

Բողոքագրերը

1. Բողոքագրերն ընդունվում են վեց ամսվա ընթացքում՝ առաքումը տալու օրվան հաջորդող օրվանից սկսած:

2. Յուրաքանչյուր Փոստային ադմինիստրացիա պարտավոր է ընդունել ցանկացած առաքման մասին բողոքագրերը, որոնք տրվել են մեկ այլ ադմինիստրացիայի ծառայությունում:

3. Հասարակ ծանրոցների և հայտարարված արժեքով ծանրոցների համար պետք է կազմվեն առանձին բողոքագրեր:

4. Բողոքագրերի մշակումը կատարվում է անվճար: Սակայն եթե հայտ է ներկայացված EMS ծառայության օգտագործման մասին, ապա լրացուցիչ ծախսերը սկզբունքորեն վճարվում են այդ հայտը ներկայացնողի կողմից:

Հոդված 31

Մաքսային զննում

1. Տրման երկրի Փոստային ադմինիստրացիան և նշանակման երկրի Փոստային ադմինիստրացիան, այդ երկրների օրենսդրության համապատասխան, իրավունք ունեն առաքանիները ներկայացնելու մաքսային զննման:

2. Մաքսային հսկողության ենթակա առաքման համար հօգուտ փոստի կարող է գանձվել սակագին մաքսատուն ներկայացնելու համար, որի առավելագույն չափը սահմանված է Կանոնակարգերում: Այս սակագինը գանձվում է միայն այն առաքումները

մաքսատուն ներկայացնելու և մաքսային զննման համար, որոնք հարկվում են մաքսային գանձումներով կամ նման բնույթի ցանկացած այլ գանձումով:

Հոդված 32

Սակագինը մաքսային զննման համար

1. Փոստային ադմինիստրացիաները, որոնք հաճախորդների անունից թույլտվություն են ստացել կատարելու մաքսային զննում, իրավունք են ստանում հաճախորդներից գանձելու սակագին, որը հիմնված է գործառնության իրական արժեքի վրա:

Հոդված 33

Մաքսատուրքեր և այլ գանձումներ

1. Փոստային ադմինիստրացիաներն իրավունք ունեն առաքումներն ուղարկողներից կամ հասցեատերերից, ըստ դեպքի, գանձելու մաքսատուրքերը և այլ հնարավոր բոլոր գանձումները:

Գլուխ 2

Պատասխանատվությունը

Հոդված 34

Փոստային ադմինիստրացիաների պատասխանատվությունը: Փոխհատուցումները

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Բացառությամբ 35-րդ հոդվածում նախատեսված դեպքերի՝ Փոստային ադմինիստրացիաները պատասխանատու են.

1.1.1. պատվիրված առաքանիների, հասարակ ծանրոցների և հայտարարված արժեքով առաքումների կորստի, հափշտակման կամ վնասման համար.

1.1.2. վերահսկվող հանձնումով առաքանիների կորստի համար:

1.2. Եթե պատվիրված առաքման, հասարակ ծանրոցի կամ հայտարարված արժեքով առաքման կորուստը, ամբողջությամբ հափշտակումը կամ լրիվ վնասումը հետևանք են փոխհատուցման հիմք չտվող ֆորսմաժորային հանգամանքների, ապա ուղարկողն իրավունք ունի վճարված սակագների փոխհատուցման՝ բացառությամբ ապահովագրական վճարների:

2. Պատվիրված առաքանիներ

2.1. Պատվիրված առաքանու կորստի, ամբողջությամբ հափշտակման կամ լրիվ վնասվելու դեպքում ուղարկողն իրավունք ունի Նամակագրական թղթակցության կանոնակարգում սահմանված փոխհատուցման: Եթե ուղարկողը պահանջում է ավելի քիչ գումար, քան սահմանված է Նամակագրական թղթակցության կանոնակարգում, ապա ադմինիստրացիան իրավունք ունի վճարելու այդ քիչ գումարը և այդ հիմքով ստանալ փոխհատուցում մյուս այն ադմինիստրացիաներից, որոնց, հնարավոր է, դա կարող է վերաբերել:

2.2. Պատվիրված առաքանու մասնակի հափշտակման կամ մասնակի վնասվելու դեպքում ուղարկողն իրավունք ունի փոխհատուցման, որը համապատասխանում է, սկզբունքորեն, պատճառված վնասի իրական արժեքին: Սակայն այն ոչ մի դեպքում չի կարող գերազանցել կորստի, լրիվ հափշտակման կամ լրիվ վնասվելու դեպքում Նամակագրական թղթակցության կանոնակարգով սահմանված գումարը: Անուղղակի վնասները կամ բաց թողնված եկամուտները հաշվի չեն առնվում:

3. Վերահսկվող հանձնումով առաքանիներ

3.1. Վերահսկվող հանձնումով առաքանու կորստի, ամբողջությամբ հափշտակման կամ լրիվ վնասվելու դեպքում ուղարկողն իրավունք ունի վճարված սակագների փոխհատուցման:

4. Հասարակ ծանրոցներ

4.1. Հասարակ ծանրոցի կորստի, ամբողջությամբ հափշտակման կամ լրիվ վնասվելու դեպքում ուղարկողն իրավունք ունի Փոստային ծանրոցների կանոնակարգով սահմանված փոխհատուցման:

4.2. Հասարակ ծանրոցի մասնակի հափշտակման կամ մասնակի վնասվելու դեպքում ուղարկողն իրավունք ունի փոխհատուցման, որը համապատասխանում է, սկզբունքորեն, պատճառված վնասի իրական արժեքին: Այն ոչ մի դեպքում չի կարող գերազանցել կորստի, ամբողջությամբ հափշտակման կամ լրիվ վնասվելու դեպքում Փոստային ծանրոցների Կանոնակարգով սահմանված գումարը: Անուղղակի վնասները կամ բաց թողնված եկամուտները հաշվի չեն առնվում:

4.3. Փոստային ադմինիստրացիաները կարող են միմյանց հետ պայմանավորվել երկկողմ հարաբերություններում կիրառել Փոստային ծանրոցների կանոնակարգում ծանրոցի համար սահմանված գումարները՝ անկախ ծանրոցի քաշից:

5. Հայտարարված արժեքով առաքանիներ

5.1. Հայտարարված արժեքով առաքանու կորստի, ամբողջությամբ հափշտակման կամ լրիվ վնասվելու դեպքում ուղարկողն իրավունք ունի փոխհատուցման, որը համապատասխանում է, սկզբունքորեն, ՀՓԻ-ով արտահայտված հայտարարված գումարին:

5.2. Հայտարարված արժեքով առաքանու մասնակի հափշտակության կամ մասնակի վնասվելու դեպքում ուղարկողն իրավունք ունի փոխհատուցման, որը համապատասխանում է, սկզբունքորեն, պատճառված վնասի իրական արժեքին: Սակայն այս փոխհատուցումը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել հայտարարված արժեքի գումարը՝ արտահայտված ՀՓԻ-ով: Անուղղակի վնասները կամ բաց թողնված եկամուտները հաշվի չեն առնվում:

6. 4-րդ և 5-րդ կետերում նախատեսված դեպքերում փոխհատուցման գումարը հաշվարկվում է առաքման համար առաքանիների ընդունման վայրում և տվյալ պահին նույնատիպ առարկաների կամ ապրանքների գնացուցակային գնով՝ վերածված ՀՓԻ-ի: Գնացուցակային գներ չլինելու դեպքում փոխհատուցումը հաշվարկվում է առարկաների կամ ապրանքների սովորական գնով, որը հաշվարկվում է նույն հիմունքներով:

7. Եթե փոխհատուցումը հաշվարկվում է պատվիրված առաքանու, հասարակ ծանրոցի կամ հայտարարված արժեքով առաքանու կորստի, ամբողջությամբ հափշտակության կամ լրիվ վնասվելու համար, ուղարկողը կամ, ըստ դեպքի, հասցեատերն իրավունք ունի, բացի դրանից, իր կողմից վճարված սակագների և գանձումների փոխհատուցման՝ բացառությամբ պատվիրման կամ ապահովագրական վճարների: Նույնը վերաբերում է նաև պատվիրված առաքանիներին, հասարակ ծանրոցների կամ հայտարարված արժեքով առաքանիներին, որոնցից դրանց վատ վիճակի պատճառով հրաժարվել են ստացողները, եթե այդ վնասը կատարվել է փոստային ծառայությունում և մտնում է նրա պատասխանատվության շրջանակների մեջ:

8. Ի բացառություն 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերի դրույթների՝ հասցեատերն իրավունք ունի փոխհատուցման հափշտակված կամ վնասված պատվիրված առաքանին, հասարակ ծանրոցը կամ հայտարարված արժեքով ծանրոցը ստանալուց հետո:

9. Տրման ադմինիստրացիան իրավունք ունի ուղարկողներին իր երկրում վճարելու պատվիրված առաքանիների և հայտարարված արժեքով ծանրոցների համար փոխհատուցումներ, որոնք նախատեսված են իր ներքին օրենսդրությամբ, եթե միայն դրանք պակաս չեն 2.1-ին և 4.1-ին կետերում նշվածներից: Նույնը վերաբերում է նաև նշանակման ադմինիստրացիային, երբ փոխհատուցումը վճարվում է հասցեատիրոջը: Սակայն 2.1-ին և 4.1-ին կետերում սահմանված գումարները կիրառվում են՝

9.1. պատասխանատու ադմինիստրացիային ներկայացված հայցի դեպքում.

9.2. եթե ուղարկողը հրաժարվում է իր իրավունքներից՝ հօգուտ հասցեատիրոջ, կամ՝ հակառակը:

Հոդված 35

Փոստային ադմինիստրացիաներին պատասխանատվությունից ազատելը

1. Փոստային ադմինիստրացիաները դադարում են պատասխանատվություն կրել պատվիրված առաքանու, վերահսկվող հանձնումով առաքանու, ծանրոցի և հայտարարված արժեքով առաքանու համար, որոնց հանձնումը նրանք իրականացրել են իրենց ներքին

կանոններով՝ նման կարգի առաքումների համար սահմանված պայմաններով: Պատասխանատվությունը, այնուամենայնիվ, պահպանվում է՝

1.1. եթե հափշտակումը կամ վնասվածքը պարզվել է կամ մինչև ծանրոցի հանձնումը, կամ հանձնելու պահին.

1.2. եթե ներքին օրենսդրությունն այդ թույլ է տալիս, առաքումը տրման վայր վերադարձնելիս հասցեատերը կամ, հարկ եղած դեպքում, ուղարկողը վերապահումներ է անում՝ ընդունելով հափշտակված կամ վնասված առաքանին.

1.3. եթե ներքին օրենսդրությունն այդ թույլ է տալիս, պատվիրված առաքանին զգվում է փոստարկղ, բայց բողոքագիր ներկայացնելիս ստացողը հայտարարում է առաքանին չստանալու մասին.

1.4. եթե ստացողը կամ, տրման վայր առաքանու հետ վերադարձման դեպքում՝ ծանրոցը կամ հայտարարված արժեքով առաքանին ուղարկողը, չնայած ճիշտ տրված անդորրագրին, անհապաղ հաղորդում է իրեն առաքանին հանձնած ադմինիստրացիային իր կողմից հայտնաբերված վնասվածքի մասին. նա պետք է ապացույցներ ներկայացնի, որ հափշտակությունը կամ վնասվածքը չեն առաջացել իր ստանալուց հետո:

2. Փոստային ադմինիստրացիաները պատասխանատվություն չեն կրում՝

2.1. ֆորսմաժորային հանգամանքների դեպքում՝ 12.4-րդ հոդվածը պահպանելու պայմանով.

2.2. այն դեպքում, երբ ֆորսմաժորային հանգամանքների արդյունքում ծառայողական փաստաթղթերի վերացման հետևանքով նրանք չեն կարող պարզել առաքանու ճակատագիրը, եթե նրանց պատասխանատվությունն ապացուցված չէ այլ կերպ.

2.3. եթե վնասը պատճառվել է ուղարկողի անփութությամբ կամ հետևանք է ներդրանքի հատկանիշների.

2.4. եթե խոսքը վերաբերում է այն առաքանիներին, որոնց ներդրանքի վրա տարածվում են 25-րդ հոդվածով նախատեսված արգելքները, քանի որ այդ առաքանիները բռնագրավվել են կամ ոչնչացվել համապատասխան իշխանությունների կողմից՝ դրանց ներդրանքի կապակցությամբ.

2.5. նշանակման երկրի օրենսդրությանը համապատասխան՝ բռնագրավման դեպքում՝ համաձայն այդ երկրի ադմինիստրացիայի հաղորդման.

2.6. եթե խոսքը հայտարարված արժեքով առաքանիների մասին է, որոնց վերաբերյալ չարամտորեն կատարվել է ներդրանքի իրական արժեքը գերազանցող արժեքի հայտարարում.

2.7. եթե ուղարկողը բողոքագիր չի ներկայացրել, առաքումը ստանալու օրվան հաջորդող օրվանից սկսած, վեց ամսվա ընթացքում.

2.8. եթե խոսքը ռազմագերիների և բռնադատված քաղաքացիական անձանց ծանրոցներին է վերաբերում:

3. Փոստային ադմինիստրացիաները ոչ մի պատասխանատվություն չեն կրում մաքսային հայտարարագրի համար, ինչպիսի ձևով էլ դրանք կազմված լինեն, և մաքսային զննման ենթակա առաքումների ստուգման ժամանակ մաքսային ծառայությունների կողմից ընդունված որոշումների համար:

Հոդված 36

Ուղարկողի պատասխանատվությունը

1. Առաքանին ուղարկողը պատասխանատվություն է կրում բոլոր այն վնասների համար, որոնք հասցվել են այլ փոստային առաքումներին իր կողմից՝ առաքման չթույլատրված կամ թույլատրման պայմաններին չհամապատասխանող առարկաներ ուղարկելով պայմանավորված:

2. Ուղարկողը պատասխանատվություն է կրում նույն չափով, ինչ Փոստային ադմինիստրացիաները:

3. Ուղարկողի պատասխանատվությունը չի հանվում, եթե նույնիսկ տրման հիմնարկը ընդունել է այդ առաքանին:

4. Հակառակը, ուղարկողը պատասխանատվություն չի կրում, եթե Փոստային ադմինիստրացիաների կամ փոխադրողների կողմից տեղի է ունեցել սխալ կամ անփութություն:

Հոդված 37

Փոխհատուցման վճարումը

1. Պատասխանատվություն կրող ադմինիստրացիային հայցի ներկայացման իրավունքի պահպանման պայմաններում փոխհատուցման վճարման և սակագների ու գանձումների վերադարձի պատասխանատվությունը դրվում է, ըստ դեպքի, տրման ադմինիստրացիայի կամ նշանակման ադմինիստրացիայի վրա:

2. Ուղարկողն իրավունք ունի հրաժարվելու իր իրավունքներից՝ հոգուտ հասցեատիրոջ: Եվ հակառակը, հասցեատերն իրավունք ունի հրաժարվելու իր իրավունքներից՝ հոգուտ ուղարկողի: Ուղարկողը կամ հասցեատերը կարող են երրորդ անձին թույլատրել ստանալ փոխհատուցումը, եթե ներքին օրենսդրությունն այդ թույլատրում է:

3. Տրման կամ նշանակման ադմինիստրացիաներին, կախված դեպքից, թույլատրվում է փոխհատուցումը վճարել դիմողին այն ադմինիստրացիայի փոխարեն, որը, մասնակցելով փոխադրմանը և երկամսյա ժամկետն ավարտվելուն պես կանոնավորապես ստանալով դիմումներ, և եթե այդ հարցի մասին հաղորդվել է հեռաձայնով կամ որևէ այլ էլեկտրոնային կապի միջոցներով, որը թույլ է տալիս հաստատել բողոքագրի ստացումը, 30 օր անց չի տվել վերջնական պատասխան հարցին կամ չի հաղորդել, որ՝

3.1 առաքանու վնասվածքը, ըստ երևույթին, կապված է ֆորսմաժորային հանգամանքների հետ.

3.2 առաքանին պահվել, բռնագրավվել կամ ոչնչացվել է իրավասու մարմինների կողմից՝ ներդրանքի պատճառով, կամ բռնագրավվել է նշանակման երկրի օրենսդրությանը համապատասխան:

4. Տրման կամ նշանակման ադմինիստրացիաներին, կախված դեպքից, թույլատրվում է փոխհատուցում վճարել դրա իրավունքն ունեցողին այն դեպքում, երբ բողոքագրի ձևաթուղթը թերի է լրացված և պետք է վերադարձվեր լրացուցիչ տեղեկատվության համար, որը պահանջում է 3-րդ կետով սահմանված ժամկետի անցում:

5. Երբ խոսքը վերաբերում է վերադիր վճարով առաքանու կապակցությամբ բողոքագրին, տրման ադմինիստրացիան իրավունք ունի փոխհատուցում վճարելու դրա իրավունքն ունեցողին փոխհատուցման գումարի սահմաններում, նշանակման ադմինիստրացիայի հաշվին, որը, կանոնավորապես ստանալով դիմումներ, երկու ամիսն ավարտվելուն պես հարցին վերջնական պատասխան չի տվել:

Հոդված 38

Փոխհատուցման հնարավոր ստացումը ուղարկողից կամ հասցեատիրոջից

1. Եթե փոխհատուցման վճարումից հետո պատվիրված առաքանին, ծանրոցը կամ հայտարարված արժեքով առաքանին կամ ներդրանքի մի մասը, որը նախկինում համարվում էր կորած, գտնվել է, ապա ուղարկողը կամ հասցեատերը ծանուցվում է այն մասին, որ առաքանին կարող է իրեն հանձնվել երեք ամսվա ընթացքում՝ վճարված փոխհատուցման գումարը իրենից հետ ստանալու դեպքում: Միաժամանակ նրան հարցում է արվում, թե ո՞ւմ պետք է հանձնվի առաքանին: Հրաժարվելու կամ սահմանված ժամկետում պատասխանի բացակայության դեպքում այդպիսի կարգ է կիրառվում նաև հասցեատիրոջ կամ, ըստ հանգամանքների, ուղարկողի նկատմամբ:

2. Եթե ուղարկողը և հասցեատերը հրաժարվում են ստանալ առաքանին, ապա այն անցնում է ադմինիստրացիայի սեփականությանը կամ, հարկ եղած դեպքում՝ ադմինիստրացիաների, որոնք վնասներ են կրել:

3. Հայտարարված արժեքով առաքանու հետագայում հայտնաբերվելու դեպքում, որի ներդրանքի արժեքը ցածր է գնահատվել վճարված փոխհատուցման գումարից, ուղարկողը կամ ստացողը, կախված դեպքից, պետք է վերադարձնի առաքանին հանձնելու համար

փոխհատուցման գումարը՝ անկախ արժեքի՝ չարամտորեն հայտարարումից բխող հետևանքներից:

Հոդված 39

Առաքանիների փոխանակումը

1. Ադմինիստրացիաները կարող են իրենցից մեկի կամ մի քանիսի միջնորդությամբ միմյանց առաքել առաքանիներ ինչպես փակ ճեպագրերով, այնպես էլ բաց տարանցմամբ՝ Կանոնակարգերի դրույթներին համապատասխան:

2. Եթե արտակարգ հանգամանքների հետևանքով որևէ Փոստային ադմինիստրացիա ստիպված է ժամանակավորապես ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարեցնել ծառայության աշխատանքը, ապա նա պարտավոր է այդ մասին անհապաղ հաղորդել շահագրգիռ ադմինիստրացիաներին:

3. Եթե տարանցումով փոստի փոխադրումը որևէ երկրով կատարվում է առանց այդ երկրի Փոստային ադմինիստրացիայի մասնակցության, ապա տվյալ ադմինիստրացիան պետք է այդ մասին տեղեկացվի վաղօրոք: Տարանցման այսպիսի եղանակը պատասխանատվություն չի դնում տարանցման երկրի Փոստային ադմինիստրացիայի վրա:

4. Ադմինիստրացիաներն իրավունք ունեն օդային ճանապարհով վերգետնյա ծանրոցների հետ ուղարկելու սահմանափակ առաջնահերթությամբ ճեպագրեր՝ այն ադմինիստրացիաների միջև համաձայնագիր կնքելու պայմանով, որոնք այդ ճեպագրերն ստանում են իրենց երկրների օդանավակայաններում:

Հոդված 40

Չհնվորական ստորաբաժանումների հետ փակ ճեպագրերի փոխանակումը

1. Նամակագրական թղթակցություններով փակ ճեպագրերի փոխանակումը կարող է կատարվել այլ երկրների ցամաքային, ծովային կամ օդային ծառայությունների միջոցով.

1.1. անդամ երկրներից մեկի փոստային հիմնարկների և Միավորված ազգերի կազմակերպության տրամադրության տակ գտնվող զինվորական ստորաբաժանումների հրամանատարների միջև.

1.2. այդ զինվորական ստորաբաժանումների հրամանատարների միջև.

1.3. անդամ երկրներից մեկի փոստային հիմնարկների և նույն երկրի՝ արտասահմանում գտնվող ծովային կամ օդային ստորաբաժանումների, ռազմական նավերի կամ ինքնաթիռների հրամանատարների միջև.

1.4. միևնույն երկրի ծովային կամ օդային ստորաբաժանումների, ռազմական նավերի կամ օդանավերի միջև:

2. 1-ին կետում նշված փակ ճեպագրերով նամակագրական թղթակցության առաքանիները պետք է ուղարկվեն կամ պատկանեն միայն զինվորական ստորաբաժանումների կամ շտաբների և նավերի ու ինքնաթիռների անձնակազմներին, որոնք ստանում կամ ուղարկում են ճեպագրեր: Դրանց նկատմամբ կիրառվող առաքման սակագները և պայմանները սահմանվում են այն երկրի Փոստային ադմինիստրացիայի կանոններին համաձայն, որը տնօրինման է տրամադրել զինվորական ստորաբաժանումը, կամ որին պատկանում են նավերը կամ ինքնաթիռները:

3. Բացառությամբ հատուկ պայմանավորվածության՝ այն երկրի Փոստային ադմինիստրացիան, որը տնօրինման է տրամադրել զինվորական ստորաբաժանումը, կամ որին պատկանում են ռազմականավերը կամ ինքնաթիռները, պարտավոր է համապատասխան ադմինիստրացիաներին վճարել ճեպագրերի տարանցման ծախսերը, օդային փոխադրման համար վերջնական ծախսերը և ծախսերը:

Հոդված 41

Փոստային ադմինիստրացիաների միջև պատասխանատվության որոշումը

1. Մինչև հակառակը չապացուցվի, պատասխանատվությունն ընկնում է այն Փոստային ադմինիստրացիայի վրա, որը, առանց վերապահման և, ունենալով քննություն

կատարելու համար սահմանված բոլոր միջոցները, ընդունելով առաքումը, չի կարող ապացուցել ոչ դրա հանձնումը հասցեատիրոջը, ոչ էլ, եթե դա տեղի է ունեցել, մեկ այլ ադմինիստրացիայի դրա ճիշտ հանձնումը:

2. Եթե կորուստը, հափշտակումը կամ վնասվածքը տեղի են ունեցել առաքման ժամանակ, և հնարավոր չէ պարզել, թե որ տարածքում կամ որ երկրի ծառայությունում է դա տեղի ունեցել, համապատասխան ադմինիստրացիաները վնասը ծածկում են հավասար մասերով: Սակայն եթե խոսքը վերաբերում է հասարակ ծանրոցին, և փոխհատուցման գումարը չի գերազանցում 34.4.1-ին հոդվածում 1 կգ քաշով ծանրոցի համար հաշվարկված գումարը, ապա այդ գումարը վճարվում է տրման ադմինիստրացիայի և նշանակման ադմինիստրացիայի կողմից՝ հավասար մասերով, բացառությամբ միջանկյալ ադմինիստրացիաների:

3. Ինչ վերաբերում է հայտարարված արժեքով առաքանիներին, ապա մի ադմինիստրացիայի պատասխանատվությունը մյուս ադմինիստրացիաների նկատմամբ ոչ մի դեպքում չի կարող գերազանցել արժեքի հայտարարման՝ իր կողմից ընդունված սահմանը:

4. Փոստային ադմինիստրացիաները, որոնք չեն ապահովում հայտարարված արժեքով առաքումների ծառայություն, պատասխանատվություն են կրում այդպիսի առաքումների համար փակ ճեպագրերով դրանց փոխադրման ժամանակ, որը (պատասխանատվությունը) նախատեսված է պատվիրված առաքումների համար և, համապատասխանաբար, հասարակ ծանրոցների համար: Այս դրույթը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ Փոստային ադմինիստրացիաները պատասխանատվություն չեն կրում իրենց կողմից օգտագործվող նավերով կամ ինքնաթիռներով արժեքների փոխադրման համար:

5. Եթե հայտարարված արժեքով առաքման կորուստը, հափշտակությունը կամ վնասվածքը տեղի են ունեցել միջանկյալ ադմինիստրացիայի տարածքում կամ ծառայությունում, որը չի ապահովում հայտարարված արժեքով առաքումների ծառայություն, ապա տրման ադմինիստրացիան փոխհատուցում է միջանկյալ ադմինիստրացիայի չծածկված վնասը: Այս նույն կանոնը կիրառվում է այն դեպքում, երբ վնասի չափը գերազանցում է միջանկյալ ադմինիստրացիայի կողմից ընդունված հայտարարված արժեքի առավելագույն սահմանը:

6. Մաքսատուրքերը և մյուս գանձումները, որոնք չէին կարող վերացվել, վերագրվում են առաքանու կորստի, հափշտակության կամ վնասվածքի համար պատասխանատու ադմինիստրացիայի հաշվին:

7. Փոխհատուցում վճարած ադմինիստրացիան այդ փոխհատուցման գումարի սահմաններում փոխարինում է (իրավունքների առումով) այն անձին, որը դա ստացել է հասցեատիրոջից կամ ուղարկողից կամ մի երրորդ անձից՝ ցանկացած հնարավոր վնասների գանձման դեպքում:

Գլուխ 3

Նամակագրական թղթակցության առաքանիներին վերաբերող դրույթները

Հոդված 42

Նպատակները ծառայության որակի բնագավառում

1. Ադմինիստրացիաները պետք է ժամկետ սահմանեն մտից կամ ելից առաջնահերթ և ավիաառաքումների, ինչպես նաև վերգետնյա և ոչ առաջնահերթ առաքումների մշակման համար: Այս ժամկետը չպետք է պակաս բարենպաստ լինի նմանատիպ առաքումների համար իրենց ներքին ծառայությունում կիրառվող ժամկետից:

2. Տրման ադմինիստրացիաները պետք է հրապարակեն արտասահման նշանակմամբ առաջնահերթ և ավիաառաքումների համար ծառայության որակի բնագավառում նպատակները՝ որպես ուղենիշ ընդունելով տրման և նշանակման ադմինիստրացիաների կողմից սահմանված ժամկետները և հաշվի առնելով փոխադրման ժամկետները:

3. Փոստային ադմինիստրացիաները պարբերաբար ստուգում են այն ժամկետների պահպանումը, որոնք սահմանված են կամ Միջազգային բյուրոյի, կամ Տարածաշրջանային

միությունների կողմից կազմակերպվող հարցումների ժամանակ, կամ երկկողմ համաձայնագրերի հիման վրա:

4. Նաև ցանկալի է, որ Փոստային ադմինիստրացիաները պարբերաբար ստուգեն սահմանված ժամկետների պահպանումը վերահսկողության այլ համակարգերի օգնությամբ, մասնավորապես, արտաքին հսկիչ ստուգումների ժամանակ:

5. Ըստ հնարավորության՝ ադմինիստրացիաները ծառայության որակի վերահսկողության համակարգերը կիրառում են միջազգային փոստով ճեպագրերի համար (ինչպես մտից, այնպես էլ ելից). խոսքը գնահատման մասին է, որն անցկացվում է, ըստ հնարավորության, տրման պահից սկսած մինչև հանձնման պահը (ամբողջական հսկողություն):

6. Բոլոր անդամ երկրները Միջազգային բյուրոյին ներկայացնում են արդիականացված տեղեկատվություն տրանսպորտային միջոցների ժամանման սահմանային ժամկետների (SUՄՍԺ) վերաբերյալ, որոնք նրանց համար հանդիսանում են կողմնորոշիչ իրենց միջազգային փոստային ծառայությունը շահագործելիս: Նրանք Միջազգային բյուրոյին հաղորդում են հնարավոր փոփոխությունների մասին, հենց որ դրանք նախատեսվում են, որպեսզի նրան հնարավորություն տրվի Փոստային ադմինիստրացիաներին ժամանակին հաղորդելու այդ փոփոխությունների մասին՝ մինչև դրանց կիրառումը:

7. Ըստ հնարավորության՝ տեղեկատվությունը պետք է ներկայացվի առանձին՝ առաջնահերթ և ոչ առաջնահերթ փոստի հոսքերի համար:

Հոդված 43

Նամակագրական թղթակցության առաքանիների ուղարկումն արտասահման

1. Ոչ մի անդամ երկիր պարտավոր չէ ոչ ուղարկել, ոչ հասցեատերերին հանձնել նամակագրական թղթակցության առաքանիները, որոնց ուղարկողները, ապրելով իր տարածքում, հանձնում կամ հանձնարարում են առաքումների հանձնումն այլ երկրում՝ այնտեղ կիրառվող ավելի բարենպաստ սակագնային պայմաններից օգտվելու նպատակով:

2. 1-ին կետի դրույթները առանց տարբերության կիրառվում են կամ ուղարկողի բնակության երկրում ձևավորված և հետագայում արտասահման փոխադրված նամակագրական թղթակցության առաքումների, կամ մեկ այլ երկրում ձևավորված նամակագրական թղթակցության առաքումների նկատմամբ:

3. Նշանակման ադմինիստրացիան իրավունք ունի ուղարկողից, իսկ նրա բացակայության դեպքում՝ տրման ադմինիստրացիայից պահանջելու ներքին սակագների վճարում: Եթե ոչ ուղարկողը, ոչ տրման ադմինիստրացիան համաձայն չեն վճարելու այդ սակագները նշանակման ադմինիստրացիայի կողմից սահմանված ժամկետում, ապա այդ ադմինիստրացիան կարող է կամ այդ առաքումները վերադարձնել տրման ադմինիստրացիային՝ ունենալով վերադարձման համար ծախսերի փոխհատուցման իրավունք, կամ դրանք մշակել՝ համաձայն իր ներքին օրենսդրության:

4. Ոչ մի անդամ երկիր պարտավոր չէ ոչ ուղարկել, ոչ ստացողներին հանձնել նամակագրական թղթակցության առաքանիները, որոնք ուղարկողները իրենք կամ ինչ-որ մեկի միջոցով տվել են մեծ քանակությամբ ոչ այն երկրում, որտեղ իրենք բնակվում են, եթե վերջնական ծախսերի գումարը, որը անհրաժեշտ է գանձել, այնքան բարձր չլինի, ինչպես այն գումարը, որը նրանք կգանձեն, եթե առաքումները ուղարկողների տրվելին ապրած երկրում: Նշանակման ադմինիստրացիաներն իրավունք ունեն տրման ադմինիստրացիայից պահանջելու իրենց կրած ծախսերի փոխհատուցում, որը չի կարող գերազանցել հետևյալ երկու բանաձևերի ամենամեծ գումարը. կամ համարժեք առաքանիների նկատմամբ կիրառվող ներքին սակագնի 80 % -ը, կամ առաքման համար՝ 0.14 ՀՓԻ՝ գումարած 1 ՀՓԻ՝ մեկ կիրգրամի համար: Եթե տրման ադմինիստրացիան հրաժարվում է վճարել պահանջվող գումարը նշանակման ադմինիստրացիայի կողմից սահմանված ժամկետում, ապա վերջինս կարող է վերադարձնել տրման ադմինիստրացիային առաքանիները, ունենալով վերադարձման համար ծախսերի փոխհատուցման իրավունք, կամ դրանք մշակել՝ համաձայն իր ներքին օրենսդրության:

Հոդված 44**Թույլատրելի կենսաբանական նյութերը**

1. Արագ փչացող կենսաբանական նյութերը, վարակիչ նյութերը և կոշտ ածխաթթու գազը (չոր սառույց), եթե այն օգտագործվում է վարակիչ նյութերի սառեցման համար, կարող են փոստով ուղարկվել միայն պաշտոնապես ճանաչված իրավասու լաբորատորիաների միջև փոխանակման շրջանակներում: Այս վտանգավոր ապրանքները կարող են թույլատրվել փոստում դրանք ավիանավապարհով առաքելու համար՝ պայմանով, որ ազգային օրենսդրությունը, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) գործող տեխնիկական կանոնները և վտանգավոր ապրանքներին վերաբերող՝ Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի կանոնները այդ թույլատրում են:

2. Արագ փչացող կենսաբանական նյութերի և վարակիչ նյութերի համար, որոնք ձևավորվել և փաթեթավորվել են Կանոնակարգի համապատասխան դրույթներին համաձայն, գանձվում է սակագին առաջնահերթ առաքումների կամ՝ սակագին պատվիրված նամակների համար: Թույլատրվում է կատարել այս առաքումների փոստային մշակում՝ լրացուցիչ սակագնի գանձման պայմանով:

2.1. Արագ փչացող կենսաբանական նյութերի և վարակիչ նյութերի առաքումը սահմանափակված է այն անդամ երկրների կողմից, որոնց Փոստային ադմինիստրացիաները համաձայնել են ընդունել այդ առաքումները կամ փոխադարձ հարաբերություններում, կամ մեկ ուղղությամբ:

2.2. Այս նյութերն առաքվում են ամենաարագ ճանապարհով, սովորաբար օդային ճանապարհով՝ համապատասխան օդային լրացուցիչ սակագների վճարման և առաքման մեջ առաջնահերթության տրամադրման պայմանով:

Հոդված 45**Էլեկտրոնային փոստը**

1. Փոստային ադմինիստրացիաները կարող են միմյանց հետ պայմանավորվել էլեկտրոնային փոստի ծառայություններին մասնակցելու մասին:

2. Էլեկտրոնային փոստը փոստային ծառայություն է, որն էլեկտրակապի ուղիներն օգտագործում է բնագրին համապատասխան և մի քանի վայրկյանի ընթացքում ուղարկողից ստացվող հաղորդագրությունները փոխանցում է ֆիզիկական կամ էլեկտրոնային տեսքով, որոնք պետք է հասցեատիրոջը հանձնվեն ֆիզիկական կամ էլեկտրոնային տեսքով: Ֆիզիկական տեսքով տալու դեպքում տեղեկատվությունը, որպես կանոն, ըստ հնարավորության՝ հաղորդվում է էլեկտրոնային ճանապարհով ամենամեծ տարածության վրա և վերարտադրվում է ֆիզիկական ձևով, ըստ հնարավորության՝ հասցեատիրոջ համար առավել հարմար տեսքով: Ֆիզիկական տեսքով հաղորդագրությունները հասցեատիրոջը հանձնվում են տպված վիճակով՝ որպես նամակագրական թղթակցության առաքումներ:

3. Էլեկտրոնային փոստին վերաբերող սակագները սահմանվում են ադմինիստրացիաների կողմից՝ արժեքին և շուկայի պահանջներին համապատասխան:

Հոդված 46**Տարանցման ծախսերը**

1. 52-րդ հոդվածի պահպանման պայմանով՝ երկու ադմինիստրացիաների կամ նույն երկրի երկու հիմնարկների միջև մեկ կամ մի քանի ուրիշ ադմինիստրացիաների միջնորդությամբ (երրորդ ծառայություններ) փոխանակվող փակ ճեպագրերի փոխադրման համար գանձվում է տարանցման ծախսերի վճար: Այս վճարը փոխհատուցում է ցամաքային, ծովային և օդային տարանցման ծառայությունների տրամադրման համար:

2. Բաց տարանցումով ուղարկվող առաքումների համար ևս կարող են գանձվել տարանցման ծախսեր:

3. Կիրառման եղանակները և սանդղակները շարադրված են Նամակագրական թղթակցության կանոնակարգում:

Հոդված 47**Վերջնական ծախսեր: Ընդհանուր դրույթներ**

1. 52-րդ հոդվածի պայմաններով՝ յուրաքանչյուր ադմինիստրացիա, որը մեկ այլ ադմինիստրացիայից ստանում է նամակագրական թղթակցության առաքումներ, իրավունք ունի ուղարկող ադմինիստրացիայից գանձելու միջազգային փոստի ստացման հետ կապված ծախսերի փոխհատուցում:

2. Վերջնական ծախսերի փոխհատուցման վերաբերյալ դրույթների կիրառման համար Փոստային ադմինիստրացիաները դասակարգվում են «արդյունաբերական զարգացած երկրների» կամ «զարգացող երկրների»՝ Համագումարի կողմից այս նպատակով կազմված ցուցակին համապատասխան:

3. Վերջնական ծախսերի վճարման վերաբերյալ սույն Կոնվենցիայի դրույթները անցումային միջոցներ են, որոնք հանգեցնում են յուրաքանչյուր երկրին բնորոշ տարրերը՝ հաշվի առնելով վճարման համակարգի ընդունումը:

4. Ներքին ռեժիմի մատչելիությունը

4.1. Յուրաքանչյուր ադմինիստրացիա մյուս ադմինիստրացիաների նկատմամբ կիրառում է բոլոր սակագները, ժամկետները և պայմանները, որոնք առաջարկվում են իր ներքին ռեժիմում՝ այն պայմաններով, որոնք համարժեք են իր ազգային հաճախորդներին առաջարկվողներին:

4.2. Ուղարկող ադմինիստրացիան համանման պայմաններում կարող է որևէ նշանակման արդյունաբերական զարգացած երկրի ադմինիստրացիայից պահանջել օգտվել այն նույն պայմաններից, որոնք վերջինս նախատեսել է իր ազգային հաճախորդների համար՝ համարժեք առաքումների դեպքում:

4.3. Չարգացող երկրների ադմինիստրացիաները պետք է տեղյակ պահեն՝ թույլատրում են իրենք 4.1-ին կետում հիշատակված պայմանների կիրառումը:

4.3.1. Եթե որևէ զարգացող երկրի ադմինիստրացիա հայտարարում է այն մասին, որ թույլատրում է իր ներքին ռեժիմում առաջարկվող պայմանների կիրառումը, ապա այդ թույլտվությունը կիրառվում է Միության բոլոր ադմինիստրացիաների նկատմամբ՝ առանց խտրականության:

4.4. Նշանակման ադմինիստրացիան իրավունք ունի որոշելու՝ կիրառվում են արդյոք տրման ադմինիստրացիայի կողմից իր ներքին ռեժիմի նկատմամբ օգտագործման պայմանները:

5. Մեծաքանակ փոստի համար վերջնական ծախսերի սակագները չպետք է գերազանցեն առավել բարենպաստ սակագները, որոնք կիրառվում են նշանակման ադմինիստրացիայի կողմից՝ վերջնական ծախսերի վերաբերյալ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերին համապատասխան: Նշանակման ադմինիստրացիան իրավունք ունի որոշելու՝ կատարվում են արդյոք իր ներքին ռեժիմի նկատմամբ օգտագործման պայմանները տրման ադմինիստրացիայի կողմից:

6. Փոստային շահագործման խորհուրդն իրավունք ունի փոխելու 48-51-րդ հոդվածներում նշված փոխհատուցումը երկու Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում: Վերանայումը, որը կարող է իրականացվել, պետք է հիմնվի հուսալի տնտեսական և ֆինանսական տվյալների վրա և իրականացվի վերջնական ծախսերի վերաբերյալ Կոնվենցիայի և Նամակագրական թղթակցության կանոնակարգի բոլոր դրույթները հաշվի առնելով: Հնարավոր փոփոխության մասին որոշումն ուժի մեջ է մտնում Փոստային շահագործման խորհրդի կողմից որոշած օրվանից սկսած:

7. Ցանկացած ադմինիստրացիա կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել 1-ին կետում նախատեսված փոխհատուցումից:

8. Երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի հիման վրա շահագրգիռ ադմինիստրացիաները կարող են վերջնական ծախսերի հետ կապված հաշիվների վճարման համար կիրառել փոխհատուցման այլ համակարգեր:

Հոդված 48

Վերջնական ծախսեր: Դրույթներ, որոնք կիրառվում են արդյունաբերական զարգացած երկրների միջև փոխանակումների նկատմամբ

1. Նամակագրական թղթակցության առաքանիների համար փոխհատուցումը, ներառյալ մեծաքանակ փոստը, բացառությամբ Մ պարկերի, սահմանվում է առաքումների և կիլոգրամի համար կիրառվող սակագների նմանությամբ, որոնք արտացոլում են նշանակման երկրում մշակման ծախսերը. այդ ծախսերը պետք է կապված լինեն ներքին սակագների հետ: Սակագների հաշվարկն իրականացվում է Նամակագրական թղթակցության կանոնակարգում նշված պայմանների հիման վրա:

2. 2001-2003 թթ. ժամանակահատվածում առաքման և կիլոգրամի համար սակագները չեն կարող գերազանցել այն սակագները, որոնք հաշվարկվել են՝ ելնելով ներքին ռեժիմում 20 գ քաշով նամակի համար՝ 60 % սակագնից, ոչ էլ՝ գերազանցել հետևյալ սակագները՝

2.1. 2001 թ. համար՝ 0.158 ՀՓԻ՝ առաքման և 1.684 ՀՓԻ՝ կիլոգրամի համար.

2.2. 2002 թ. համար՝ 0.172 ՀՓԻ՝ առաքման և 1.684 ՀՓԻ՝ կիլոգրամի համար.

2.3. 2003 թ. համար՝ 0.215 ՀՓԻ՝ առաքման և 1.684 ՀՓԻ՝ կիլոգրամի համար:

3. 2004 և 2005 թթ. համար Փոստային շահագործման խորհուրդը կսահմանի սակագների վերջնական տոկոսը, որը կհամապատասխանի յուրաքանչյուր արդյունաբերական զարգացած երկրին՝ յուրաքանչյուր երկրի ծախսերի և սակագների միջև հարաբերակցությանը համապատասխան:

4. 2001-2005 թթ. ժամանակահատվածի համար սակագները, որոնք կկիրառվեն, չեն կարող ցածր լինել առաքման համար՝ 0.147 ՀՓԻ-ից և կիլոգրամի համար՝ 1.491 ՀՓԻ-ից:

5. Մ պարկերի վերաբերյալ կիրառվող սակագինը հավասար է 0.653 ՀՓԻ՝ կգ-ի համար:

5.1. 5 կգ-ից պակաս Մ պարկերը դիտվում են որպես 5 կգ կշիռ ունեցող՝ վերջնական ծախսերի փոխհատուցման համար:

6. Նշանակման ադմինիստրացիան իրավունք ունի պատվիրված առաքումների հանձնման համար գանձելու լրացուցիչ գումար՝ 0.5 ՀՓԻ՝ պատվիրված առաքման համար և 1 ՀՓԻ՝ հայտարարված արժեքով առաքման համար՝ դրանք հանձնելիս:

7. Արդյունաբերական զարգացած երկրների միջև նախատեսված դրույթները կիրառվում են ցանկացած զարգացող երկրի նկատմամբ, որը հայտարարել է այն մասին, որ ինքը կցանկանար կիրառել դրանք, և որը ցանկանում է, որ իրեն դիտեն որպես արդյունաբերական զարգացած երկիր 48-50-րդ հոդվածների և դրանց վերաբերող՝ Նամակագրական թղթակցության կանոնակարգի հոդվածների դրույթների կիրառման առումով:

Հոդված 49

Վերջնական ծախսեր: Դրույթներ, որոնք կիրառվում են զարգացող երկրներից նշանակման արդյունաբերական զարգացած երկրներ փոստի հոսքերի նկատմամբ

1. Փոխհատուցումը

1.1. Նամակագրական թղթակցության առաքման համար փոխհատուցումը, բացառությամբ Մ պարկերի, կազմում է 3.427 ՀՓԻ՝ կիլոգրամի համար:

1.2. Մ պարկերի նկատմամբ կիրառվող սակագինը կազմում է 0.653 ՀՓԻ՝ կիլոգրամի համար:

1.2.1. 5 կգ-ից պակաս քաշով Մ պարկերը դիտվում են որպես 5 կգ կշիռ ունեցող՝ վերջնական ծախսերի փոխհատուցման համար:

1.3. Նշանակման ադմինիստրացիան իրավունք ունի պատվիրված առաքումների հանձնման համար գանձելու լրացուցիչ գումար՝ 0.5 ՀՓԻ՝ պատվիրված առաքման և 1 ՀՓԻ՝ հայտարարված արժեքով առաքման համար՝ դրանք հանձնելիս:

2. Վերանայման մեխանիզմը

2.1. Տարեկան 150 տոննան գերազանցող փոստի հոսք ուղարկող ադմինիստրացիան կարող է հասնել 1.1-ին կետում նշված սակագնի վերանայման, եթե նա նշում է, որ որոշակի

ուղղությամբ ուղարկվող փոստի մեկ կիլոգրամում պարունակվող առաքումների միջին թվաքանակը 14-ից քիչ է:

2.2. Տարեկան 150 տոննան գերազանցող փոստի հոսք ստացող ադմինիստրացիան կարող է հասնել 1.1-ին կետում նշված սակագնի վերանայման, եթե նա նշում է, որ որոշակի ուղղությամբ ստացված փոստի կիլոգրամում պարունակվող առաքումների միջին թվաքանակը գերազանցում է 21-ը:

2.3. Վերանայումը կատարվում է Նամակագրական թղթակցության կանոնակարգում սահմանված պայմաններով:

3. Համակարգերի համաձայնեցման մեխանիզմը

3.1. Եթե տարեկան 50 տոննան գերազանցող փոստի հոսք ստացող ադմինիստրացիան նշում է, որ այդ հոսքի տարեկան քաշը գերազանցում է Նամակագրական թղթակցության կանոնակարգում նշված պայմաններին համապատասխան հաշվարկված սահմանը, ապա նա կարող է այդ սահմանը գերազանցող փոստի նկատմամբ կիրառել 48-րդ հոդվածում նախատեսված փոխհատուցման համակարգը՝ պայմանով, որ նա չի կիրառել վերանայման մեխանիզմը:

4. Մեծաքանակ փոստը

4.1. Մեծաքանակ փոստի համար փոխհատուցումը սահմանվում է 48.1-ին հոդվածում նախատեսված առաքման և կիլոգրամի համար սակագների կիրառմանը համապատասխան:

Հոդված 50

Վերջնական ծախսեր: Արդյունաբերական զարգացած երկրներից նշանակման զարգացող երկրներ փոստի հոսքերի նկատմամբ կիրառվող դրույթները

1. Փոխհատուցումը

1.1. Նամակագրական թղթակցության առաքման համար փոխհատուցումը, բացառությամբ Մ պարկերի, կազմում է 3.427 ՀՓԻ մեկ կգ համար:

1.1.1. 1.1-ին կետում նշված սակագնի կիրառումից բխող վերջնական ծախսերն ավելանում են 7.5%-ով՝ զարգացող երկրներում ծառայության որակի բարելավման ֆինանսավորման համար հիմնադրամի սահմաններում:

1.2. Մ պարկերի նկատմամբ կիրառվող սակագինը կազմում է 0.653 ՀՓԻ՝ կգ համար:

1.2.1. 5 կգ-ից պակաս Մ պարկերը դիտվում են որպես 5 կգ կշիռ ունեցող վերջնական ծախսերի փոխհատուցման համար:

1.3. Նշանակման ադմինիստրացիան իրավունք ունի պատվիրված առաքումների հանձնման համար գանձելու լրացուցիչ գումար՝ 0.5 ՀՓԻ՝ առաքման և 1 ՀՓԻ՝ հայտարարված արժեքով առաքման համար՝ դրանք հանձնելիս:

2. Վերանայման մեխանիզմը

2.1. Տարեկան 150 տոննան գերազանցող փոստ ստացող ադմինիստրացիան կարող է հասնել սակագնի վերանայման, եթե նա նշում է, որ որոշակի ուղղությամբ ստացված փոստի մեկ կիլոգրամում պարունակվող առաքումների միջին թվաքանակը գերազանցում է 21-ը:

2.2. Վերանայումը կատարվում է Նամակագրական թղթակցության կանոնակարգում սահմանված պայմաններով:

3. Մեծաքանակ փոստը

3.1. Ադմինիստրացիաները, որոնք չեն թույլատրում ներքին ռեժիմում առաջարկվող պայմանների կիրառում, կարող են ստացվող մեծաքանակ փոստի համար պահանջել փոխհատուցում՝ 0.14 ՀՓԻ՝ առաքման և 1 ՀՓԻ՝ կիլոգրամի համար:

3.2. Ադմինիստրացիաները, որոնք թույլատրում են ներքին ռեժիմում առաջարկվող պայմանների կիրառում, կարող են ստացվող մեծաքանակ փոստի նկատմամբ կիրառել փոխհատուցում, որը համապատասխանում է այդ կարգի առաքումների համար ազգային հաճախորդներին առաջարկվող ներքին սակագներին, որն ավելացված է 9 % -ով, ընդ որում՝ դրանք չեն կարող գերազանցել 48.2-րդ հոդվածում նշված սակագները:

Հոդված 51

Վերջնական ծախսեր: Դրույթներ, որոնք կիրառվում են զարգացող երկրների միջև փոխանակումների նկատմամբ

1. Փոխհատուցումը

1.1. Նամակագրական թղթակցության առաքման համար, բացառությամբ Մ պարկերի, փոխհատուցումը կազմում է 3.427 ՀՓԻ մեկ կգ համար:

1.2. Մ պարկերի համար կիրառվող սակագինը կազմում է 0.653 ՀՓԻ մեկ կգ համար:

1.2.1. 5 կգ-ից պակաս Մ պարկերը դիտվում են որպես 5 կգ կշիռ ունեցող՝ վերջնական ծախսերի փոխհատուցման համար:

1.3. Նշանակման ադմինիստրացիան իրավունք ունի պատվիրված առաքումների հանձնման համար գանձելու լրացուցիչ գումար՝ 0.5 ՀՓԻ՝ առաքման և 1 ՀՓԻ՝ հայտարարված արժեքով առաքման համար՝ դրանք հանձնելիս:

2. Վերանայման մեխանիզմը

2.1. Տարեկան 150 տոննան գերազանցող փոստ ստացող ադմինիստրացիան կարող է հասնել սակագնի վերանայման, եթե նա նշում է, որ որոշակի ուղղությամբ ստացված փոստի մեկ կիլոգրամում պարունակվող առաքումների միջին թվաքանակը գերազանցում է 21-ը:

2.2. Վերանայումը կատարվում է Նամակագրական թղթակցության կանոնակարգում սահմանված պայմաններով:

3. Մեծաքանակ փոստը

3.1. Ադմինիստրացիաները, որոնք թույլ չեն տալիս ներքին ռեժիմում առաջարկվող պայմանների կիրառում, կարող են մեծաքանակ փոստի համար պահանջել փոխհատուցում. 0.14 ՀՓԻ չափով՝ առաքման և 1 ՀՓԻ՝ մեկ կիլոգրամի համար:

3.2. Ադմինիստրացիաները, որոնք թույլ են տալիս ներքին ռեժիմում առաջարկվող պայմանների կիրառում, կարող են ստացվող մեծաքանակ փոստի համար կիրառել փոխհատուցում այդ կարգի առաքումների համար ազգային հաճախորդներին առաջարկվողներին համապատասխան, որն ավելացված է 9 %-ով, ընդ որում՝ դրանք չեն կարող գերազանցել 48.2-րդ հոդվածում նշված սակագները:

Հոդված 52

Ազատումը տարանցման և վերջնական ծախսերի վճարումից

1. Ցամաքային կամ ծովային տարանցման գծով ծախսերի և վերջնական ծախսերի վճարումից ազատվում են 8.2.2-րդ հոդվածում նշված նամակագրական թղթակցության առաքումները և տրման վայր փակ ճեպագրերով վերադարձվող՝ չհանձնված փոստային առաքումները: Դատարկ փոստային պարկերով առաքումներն ազատվում են վերջնական ծախսերի վճարումից, բայց ոչ տարանցման ծախսերից, որոնց վճարումը դրվում է Փոստային այն ադմինիստրացիայի վրա, որին պատկանում են տարողությունները:

Հոդված 53

Օդային փոխադրման հետ կապված ծախսերը

1. Օդային ամբողջ ճանապարհի ընթացքում փոխադրման համար ծախսերը ծածկվում են՝

1.1. Եթե խոսքը փակ ճեպագրերի մասին է, տրման երկրի ադմինիստրացիայի հաշվին.

1.2. Եթե խոսքը բաց տարանցումով ուղարկվող առաջնահերթ և ավիափոխադրումների մասին է, ներառյալ սխալ առաքված թղթակցությունը, այն ադմինիստրացիայի հաշվին, որը այդ առաքումները հանձնում է մյուս ադմինիստրացիային:

2. Այս կանոնները կիրառվում են նաև այն առաքումների նկատմամբ, որոնք ազատված են ցամաքային և ծովային տարանցման համար գանձումներից, 52-րդ հոդվածին համապատասխան, եթե դրանք ուղարկվում են օդային ճանապարհով:

3. Յուրաքանչյուր նշանակման ադմինիստրացիա, որն ապահովում է իր երկրի ներսում միջազգային փոստի օդային փոխադրումը, իրավունք ունի այդ փոխադրման հետ կապված լրացուցիչ ծախսերի հատուցման, եթե միայն անցած տեղամասերի միջին

հաշվարկված տարածությունը գերազանցում է 300 կմ-ը: Եթե չկա անվճար փոխադրում նախատեսող պայմանավորվածություն, ծախսերը պետք է միատեսակ լինեն արտասահմանից ստացվող բոլոր առաջնահերթ ճեպագրերի և ավիաճեպագրերի համար՝ անկախ այն բանից՝ այդ փոստը վերառաքվում է օդային ճանապարհով, թե ոչ:

4. Սակայն եթե նշանակման ադմինիստրացիայի կողմից գանձվող վերջնական ծախսերի գծով փոխհատուցումը հատուկ կերպով հիմնվում է արժեքի կամ ներքին սակագների վրա, ապա չի կատարվում ոչ մի լրացուցիչ ծախսերի փոխհատուցում ներքին օդային փոխադրման համար:

5. Նշանակման ադմինիստրացիան միջին հաշվված տարածության հաշվարկի ժամանակ բացառում է բոլոր այն ճեպագրերի քաշը, որոնց համար վերջնական ծախսերի փոխհատուցման հաշվարկը հատուկ կերպով հիմնվում է նշանակման ադմինիստրացիայի ներքին սակագների կամ արժեքի վրա:

6. Շահագրգիռ ադմինիստրացիաների միջև հատուկ պայմանավորվածության բացակայության դեպքում Կանոնակարգում նշված տարանցման ծախսերի սանդղակները կիրառվում են ավիաճեպագրերի նկատմամբ՝ ցամաքային կամ օդային ճանապարհով դրանց հնարավոր փոխադրման դեպքում: Սակայն ցամաքային տարանցման ծախսերի ոչ մի վճարում չի կատարվում՝

6.1. նույն քաղաքը սպասարկող երկու օդանավակայանների միջև ավիաճեպագրերի բեռնման դեպքում:

6.2. քաղաքը սպասարկող օդանավակայանի և այդ քաղաքում տեղակայված պահեստի միջև այդ ճեպագրերի փոխադրման, ինչպես նաև վերառաքման նպատակով այդ ճեպագրերի վերադարձի դեպքում:

Հոդված 54

Օդային փոխադրման համար հիմնական սակագինը և ծախսերի հաշվարկը

1. Օդային փոխադրման համար ադմինիստրացիաների միջև հաշվարկների վճարման նկատմամբ կիրառվող հիմնական սակագինը հաստատում է Փոստային շահագործման խորհուրդը: Այն հաշվարկվում է Միջազգային բյուրոյի կողմից՝ Նամակագրական թղթակցության կանոնակարգում սահմանված բանաձևով:

2. Բաց տարանցումով առաքվող փակ ճեպագրերի, առաջնահերթ և ավիաառաքումների փոխադրման համար ծախսերի հաշվարկը, ինչպես նաև դրանց վերաբերյալ հաշվարկների մեթոդները շարադրված են Նամակագրական թղթակցության կանոնակարգում:

Գլուխ 4

Փոստային ծանրոցների վերաբերյալ դրույթները

Հոդված 55

Նպատակները ծառայության որակի բնագավառում

1. Նշանակման ադմինիստրացիաները պետք է սահմանեն իրենց երկիրն ուղարկվող փոստային ավիածանրոցների մշակման ժամկետը: Այս ժամկետը, որն ավելացված է մաքսային հսկողության համար սովորաբար պահանջվող ժամանակով, չպետք է լինի պակաս բարենպաստ, քան այն ժամկետն է, որը կիրառվում է նմանատիպ առաքանիների նկատմամբ իրենց ներքին ծառայությունում:

2. Նշանակման ադմինիստրացիաները պետք է նաև սահմանեն, հնարավորության դեպքում, իրենց երկիր ուղարկվող ցամաքային ծանրոցների մշակման ժամկետը:

3. Տրման ադմինիստրացիաները սահմանում են արտասահման առաքվող՝ ավիա և ցամաքային ծանրոցների մշակման որակին վերաբերող նպատակները՝ որպես ուղենիշ ընդունելով նշանակման ադմինիստրացիայի սահմանած ժամկետները:

4. Ադմինիստրացիաները ստուգում են փաստացի արդյունքները այն նպատակների համեմատ, որոնք նրանք նախանշել էին ծառայության որակի բնագավառում:

Հոդված 56**Սակագնի ցամաքային բաժնենասը մտից ծանրոցների համար**

1. Երկու Փոստային ադմինիստրացիաների միջև փոխանակվող ծանրոցների վրա տարածվում են յուրաքանչյուր երկրի համար՝ մտից ծանրոցների և յուրաքանչյուր ծանրոցի համար՝ սակագնի ցամաքային բաժնենասերը, որը հաշվարկված է ծանրոցի և մեկ կիլոգրամի համար կողմնորոշիչ սակագնի համակցման ճանապարհով, որոնք սահմանված են Կանոնակարգում:

2. Հաշվի առնելով վերոշարադրյալ կողմնորոշիչ սակագները՝ ադմինիստրացիաները սահմանում են մտից ծանրոցների համար սակագնի իրենց ցամաքային բաժնենասերը այն հաշվով, որ դրանք համապատասխանեն իրենց ծառայության ծախսերին:

3. 1-ին և 2-րդ կետերում նշված սակագների բաժնենասերը վճարվում են տրման երկրի ադմինիստրացիայի կողմից, եթե միայն սույն Կոնվենցիան չի նախատեսում շեղումներ այդ սկզբունքից:

4. Մտից փոխանակման համար ցամաքային մասհանումները պետք է միասնական լինեն յուրաքանչյուր երկրի ամբողջ տարածքում:

Հոդված 57**Սակագնի ցամաքային բաժնենասը տարանցման համար**

1. Երկու ադմինիստրացիաների կամ նույն երկրի երկու հիմնարկների միջև մեկ կամ մի քանի այլ ադմինիստրացիաների ցամաքային ծառայությունների միջնորդությամբ փոխանակվող ծանրոցների համար ցամաքային փոխադրմանը մասնակցող ծառայություններով երկրների հաշվին հաշվարկվում են ցամաքային մասհանումներ տարանցման համար, որոնք սահմանված են Կանոնակարգում՝ տարածությունների սանդղակին համապատասխան:

2. Բաց տարանցումով առաքվող ծանրոցների նկատմամբ միջանկյալ ադմինիստրացիաներին թույլատրվում է պահանջել առաքման համար սակագնի պայմանագրային բաժնենասը, որը սահմանված է Կանոնակարգում:

3. 1-ին և 2-րդ կետերում նշված սակագնի բաժնենասերը վճարվում են տրման երկրի ադմինիստրացիայի կողմից, եթե միայն սույն Կոնվենցիան չի նախատեսում շեղումներ այդ սկզբունքից:

4. Փոստային շահագործման խորհուրդը լիազորված է վերանայելու և փոփոխելու սակագնի՝ ցամաքային տարանցման սակագնի բաժնենասերը երկու Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում, որը կարող է իրականացվել տարանցման գործառնություններ իրականացնող ադմինիստրացիաների արդարացի փոխհատուցումն ապահովող մեթոդաբանության համապատասխան և պետք է հիմնվի ներկայացուցչական և հուսալի՝ ֆինանսական և տնտեսական տվյալների վրա: Հնարավոր փոփոխության մասին որոշումն ուժի մեջ է մտնում Փոստային շահագործման խորհրդի կողմից սահմանված ժամկետից:

5. Սակագնի ոչ մի ցամաքային բաժնենաս չի հաշվարկվում՝

5.1. նույն քաղաքը սպասարկող երկու օդանավակայանների միջև ավիաճեպագրերի բեռնման համար:

5.2. քաղաքն սպասարկող օդանավակայանի և այդ նույն քաղաքում գտնվող պահեստի միջև այդ ճեպագրերի փոխադրման և դրանք վերառաքելու նպատակով այդ նույն ճեպագրերի վերադարձման համար:

Հոդված 58**Սակագնի ծովային բաժնենասը**

1. Ծանրոցների ծովային փոխադրմանը մասնակցող յուրաքանչյուր երկրի թույլատրվում է գանձել 2-րդ կետում բերված աղյուսակում նշված ծովային բաժնենասերը: Այս բաժնենասերը վճարում է տրման երկրի ադմինիստրացիան, եթե միայն սույն Կոնվենցիան չի նախատեսում շեղումներ այս սկզբունքից:

2. Յուրաքանչյուր օգտագործվող ծովային փոխադրման համար սակագնի ծովային բաժնեմասը սահմանված է Փոստային ծանրոցների կանոնակարգում՝ տարածությունների կիրառվող սանդղակին համապատասխան:

3. Փոստային ադմինիստրացիաներն իրավունք ունեն առավելագույնը 50%-ով բարձրացնելու 58.2-րդ հոդվածի համաձայն հաշվարկված սակագնի ծովային բաժնեմասը: Եվ հակառակը՝ կարող են իջեցնել՝ ըստ իրենց հայեցողության:

4. Փոստային շահագործման խորհուրդը լիազորված է վերանայելու և փոփոխելու սակագնի ծովային բաժնեմասը երկու Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում: Վերանայումը, որը կարող է իրականացվել տարանցման գործառնություններ իրականացնող ադմինիստրացիաների արդարացի փոխհատուցումն ապահովող մեթոդաբանության համապատասխան, պետք է հիմնվի ներկայացուցչական և հուսալի՝ ֆինանսական և տնտեսական տվյալների վրա: Հնարավոր փոփոխության մասին որոշումն ուժի մեջ է մտնում Փոստային շահագործման խորհրդի կողմից սահմանված ժամկետից:

Հոդված 59

Օդային փոխադրման ծախսերը

1. Հիմնական սակագինը, որը պետք է կիրառվի երկու ադմինիստրացիաների միջև օդային փոխադրումների համար հաշիվների վճարման ժամանակ, հաստատվում է Փոստային շահագործման խորհրդի կողմից: Այն հաշվարկվում է Միջազգային բյուրոյի կողմից՝ համաձայն Նամակագրական թղթակցության կանոնակարգում բերված բանաձևի:

2. Բաց տարանցումով ուղարկվող փակ ճեպագրերի և ավիաժանրոցների ծախսերի հաշվարկը ցույց է տրված Փոստային ծանրոցների կանոնակարգում:

3. Նույն օդանավակայանում ճանապարհին ավիաժանրոցների փոխադրումը, որոնք հետևողականորեն փոխադրվում են մի քանի առանձին օդային ծառայությունների միջոցով, կատարվում է առանց վճարման:

Հոդված 60

Ազատումը սակագնի բաժնեմասի գանձումից

1. Ծառայողական ծանրոցների և ռազմագերիների ու բռնագաղթած քաղաքացիական անձանց ծանրոցների համար չի գանձվում սակագնի ոչ մի բաժնեմաս՝ բացառությամբ ավիաժանրոցների օդային փոխադրման համար ծախսերի:

Գլուխ 5

EMS ծառայությունը

Հոդված 61

EMS ծառայությունը

1. EMS ծառայությունն իրենից ներկայացնում է փոստային ծառայություններից ֆիզիկապես ամենաարագը և ադմինիստրացիաների նկատմամբ, որոնք համաձայնել են ապահովել այդ ծառայությունը, այն ունի առաջնահերթություն փոստային մյուս առաքումների համեմատությամբ: Այն ներառում է թղթակցության, փաստաթղթերի կամ ապրանքների հավաքը, փոխանցումը և հանձնումը շատ սեղմ ժամկետում:

2. EMS ծառայությունը կանոնակարգվում է երկկողմ համաձայնագրերին համապատասխան: Այդ համաձայնագրերով հստակ չսահմանվող ասպեկտները վերաբերում են Միության Ակտերի համապատասխան դրույթներին:

3. Այս ծառայությունը, ըստ հնարավորության, որոշվում է լոգոտիպով, որի նմուշը բերվում է ներքևում, և որը բաղկացած է հետևյալ տարրերից՝

- թևի ձևը՝ նարնջագույն.
- EMS տառերը՝ կապույտ.
- երեք հորիզոնական շերտերը՝ նարնջագույն:

Լոգոտիպը կարող է լրացվել ազգային ծառայությունում կիրառվող անվանումով:



4. Ծառայության սակագները սահմանվում են տրման ադմինիստրացիայի կողմից՝ հաշվի առնելով ծախսերը և շուկայի պահանջները:

Մաս երրորդ

Նախնական և եզրափակիչ դրույթներ

Հոդված 62

Փոստային ծանրոցների ծառայությունն ապահովելու պարտավորությունը

1. Ի փոփոխումն 10.1-ին հոդվածի՝ այն երկրները, որոնք մինչև սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը չեն ստորագրել Փոստային ծանրոցների մասին Համաձայնագիրը, պարտավոր չեն ապահովել փոստային ծանրոցների ծառայությունը:

Հոդված 63

Քրեական հետապնդման միջոցների վերաբերյալ պարտավորությունները

1. Անդամ երկրների Կառավարությունները պարտավորվում են կատարել կամ իրենց երկրների օրենսդիր մարմիններին առաջարկել ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝

1.1. փոստային նամականիշները, նույնիսկ շրջանառությունից հանված, և միջազգային փոխադարձ կտրոնները կեղծելը պատժելու համար.

1.2. պատժելու համար ներքոնշյալներն օգտագործելը կամ շրջանառության մեջ դնելը՝

1.2.1. կեղծ (նույնիսկ շրջանառությունից հանված) կամ նախկինում օգտագործման մեջ եղած փոստային նամականիշները, ինչպես նաև կեղծված կամ օգտագործման մեջ եղած փոստային ֆրանկոմեքենաների կամ տպագրական մեքենաների դրոշմները.

1.2.2. կեղծված միջազգային փոխադարձ կտրոնները.

1.3. փոստային ծառայության մեջ օգտագործվող վինետկանների և նամականիշների պատրաստման և շրջանառության մեջ դնելու բոլոր չարամիտ գործողություններն արգելելու և կանխելու համար, որոնք այնպես են կեղծված կամ նմանակված, որ հեշտությամբ կարող են շփոթվել անդամ երկրներից որևէ մեկի Փոստային ադմինիստրացիայի կողմից թողարկվող վինետկանների և նամականիշների հետ.

1.4. կանխելու, հարկ եղած դեպքում՝ պատժելու համար թմրանյութեր և հոգեմետ նյութեր, ինչպես նաև պայթուցիկ, հրդեհաբռնկուն կամ այլ վտանգավոր նյութեր ներդնելու համար, որոնց ներդրանքը որոշակիորեն թույլատրված չէ Կոնվենցիայով.

1.5. փոստային առաքումների մեջ այնպիսի առարկաների ներդրումը կանխելու և պատժելու համար, որոնց վրա պատկերված է պեդոֆիլիային կամ պոռնոգրաֆիային վերաբերող՝ երեխաների պատկերներ:

Հոդված 64

Կոնվենցիային և որոշ Կանոնակարգերին վերաբերող առաջարկությունների հաստատման պայմանները

1. Համագումարին ներկայացված և սույն Կոնվենցիային վերաբերող առաջարկություններն ուժի մեջ մտնելու համար պետք է հավանության արժանանան ներկա գտնվող և քվեարկող անդամ երկրների մեծամասնության կողմից: Համագումարում ներկայացված անդամ երկրների առնվազն կեսը պետք է ներկա լինի քվեարկությանը:

2. Նամակագրական թղթակցության կանոնակարգային և Փոստային ծանրոցների կանոնակարգին վերաբերող առաջարկություններն ուժի մեջ մտնելու համար պետք է

հավանության արժանանան Փոստային շահագործման խորհրդի անդամների մեծամասնության կողմից:

3. Երկու Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում ներկայացված և սույն Կոնվենցիային ու դրա Եզրափակիչ արձանագրությանը վերաբերող առաջարկություններն ուժի մեջ են մտնում, եթե դրանք ընդունվել են.

3.1. ձայների երկու երրորդով. ընդ որում, եթե Միության անդամ երկրների առնվազն կեսը պատասխանել է հարցմանը, եթե խոսքը վերաբերում է փոփոխություններին.

3.2. մեծամասնության կողմից, եթե խոսքը վերաբերում է դրույթների մեկնաբանությանը:

4. Չնայած 3.1-ին կետում նախատեսված դրույթներին՝ ցանկացած անդամ երկիր, որի ազգային օրենսդրությունը դեռևս համատեղելի չէ առաջարկված փոփոխությանը, իրավունք ունի Միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին ներկայացնելու գրավոր հայտարարություն, որում նշվում է իր համար այդ փոփոխությունն ընդունելու անհնարինության մասին, և որը պետք է ներկայացվի իննսուներորդ ժամկետում՝ տվյալ փոփոխության մասին հաղորդման պահից սկսած:

Հոդված 65

Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 2001 թ. հունվարի 1-ից և գործողության մեջ է մնում մինչև հաջորդ Համագումարի Ակտերի ուժի մեջ մտնելը:

Ի հավաստումն որի՝ անդամ երկրների Կառավարությունների լիազորված ներկայացուցիչները ստորագրեցին սույն Կոնվենցիան մեկ օրինակով, որը ի պահ կհանձնվի Միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին: Այդ օրինակի պատճենը Համագումարի անցկացման երկրի Կառավարության կողմից կփոխանցվի յուրաքանչյուր Կողմին:

Կատարված է Պեկինում 1999 թվականի սեպտեմբերի 15-ին:

Համաշխարհային փոստային Կոնվենցիայի Եզրափակիչ արձանագրություն

Համաշխարհային փոստային Կոնվենցիան ստորագրելիս, ստորագրված սույն ամսաթվին, ներքոստորագրյալ լիազորված ներկայացուցիչները համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված I

Փոստային առաքանիների պատկանելությունը

1. 3-րդ հոդվածը չի կիրառվում Անտիգուա և Բարբուդայի, Ավստրալիայի, Բահրեյնի, Բարբադոսի, Բելիզի, Բոտսվանայի, Բրունեյ Դարուսալամի, Կանադայի, Հոնկոնգի (Չինաստան), Դոմինիկայի, Եգիպտոսի, Ֆիջիի, Գամբիայի, Գանայի, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Միացյալ Թագավորությունից կախված անդրծովյան տարածքների, Գրենադայի, Գայանայի, Իռլանդիայի, Յամայկայի, Քենիայի, Կիրիբատիի, Քուվեյթի, Լեսոթոյի, Մալայզիայի, Մալավիի, Մավրիկիայի, Նաուրուի, Նիգերիայի, Նոր Զելանդիայի, Ուգանդայի, Պապուա-Նոր Գվինեայի, Սենտ Բրիստոֆերի և Նևիսի, Սենտ Լյուսիի, Սենտ Վինսենտի և Գրինադիների, Սողոմոնի Կղզիների, Արևմտյան Սամոայի, Սեյշելյան Կղզիների, Սիեռա Լեոնեի, Սինգապուրի, Սվազիլենդի, Տանզանիայի (Միացյալ Հանրապետության), Տրինիդադի և Տոբագոյի, Տուվալուի, Վանուատուի, Չամբիայի և Զիմբաբվեի նկատմամբ:

2. 3-րդ հոդվածը չի կիրառվում նաև Դանիայի նկատմամբ, որի օրենսդրությունը չի թույլատրում ուղարկողի խնդրանքով ցանկացած քանակաքանակի թղթակցությունների առաքանիների վերադարձ կամ հասցեի փոփոխություն՝ սկսած այն պահից, երբ ստացողը տեղեկացվել է իր հասցեով առաքանու ստացման մասին:

Հոդված II

Սակագները

1. Որպես բացառություն 7.5-րդ հոդվածի՝ Կանադայի Փոստային ադմինիստրացիային թույլատրվում է գանձել փոստային սակագներ, որոնք տարբերվում են Կանոնակարգերում նախատեսված սակագներից, եթե այդ սակագները թույլատրվում են նրա երկրի օրենսդրությամբ:

Հոդված III

Բացառություն սեկոգրամների անվճար առաքման գծով

1. Որպես բացառություն 8.4-րդ հոդվածի՝ Սենտ Վինսենտի ու Գրենադիների և Թուրքիայի Փոստային ադմինիստրացիաները, որոնք իրենց ներքին ծառայությունում չեն մատուցում սեկոգրամների անվճար առաքում, իրավունք ունեն գանձելու գանձումներ և հատուկ սակագներ, որոնք, սակայն, չեն կարող բարձր լինել իրենց ներքին ծառայությունում կիրառվող սակագներից:

2. Որպես բացառություն 8.4-րդ հոդվածի՝ Գերմանիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ավստրիայի, Կանադայի, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Ճապոնիայի և Շվեյցարիայի Փոստային ադմինիստրացիաներն իրավունք ունեն գանձելու հատուկ սակագներ, որոնք իրենց ներքին ծառայությունում կիրառվում են սեկոգրամների նկատմամբ:

Հոդված IV

Հիմնական ծառայությունները

1. Չնայած 10-րդ հոդվածի դրույթներին՝ Ավստրալիան հավանություն չի տալիս փոստային ծանրոցների վրա հիմնական ծառայությունների տարածմանը:

**Հոդված V
Մանր փաթեթներ**

1. Որպես բացառություն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի՝ Սաուդյան Արաբիայի Փոստային ադմինիստրացիաներին թույլատրվում է չընդունել մանր փաթեթներ, որոնց քաշը գերազանցում է 1 կգ-ը:

**Հոդված VI
Տպագիր հրատարակություններ: Առավելագույն քաշը**

1. Որպես բացառություն 10.4.2-րդ հոդվածի՝ Կանադայի և Իռլանդիայի Փոստային ադմինիստրացիաներին թույլատրվում է սահմանափակել մինչև 2 կգ՝ մտից և ելից տպագիր հրատարակությունների առավելագույն քաշը:

**Հոդված VII
Փոստային ծանրոցների ծառայության մատուցումը**

1. Լատվիան և Նորվեգիան իրավունք են վերապահում իրենց ապահովելու փոստային ծանրոցների ծառայության մատուցում կամ Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կամ ելից ծանրոցների դեպքում և երկկողմ համաձայնագրի կնքման դեպքում՝ օգտագործելով ցանկացած այլ առավել արդյունավետ միջոց իր հաճախորդների համար:

**Հոդված VIII
Ծանրոցները: Առավելագույն քաշը**

1. Որպես բացառություն 10.6-րդ հոդվածի՝ Կանադայի Փոստային ադմինիստրացիային թույլատրվում է մինչև 30 կգ սահմանափակել մտից և ելից ծանրոցների առավելագույն քաշը:

**Հոդված IX
Գնահատված առաքանիների առավելագույն սահմանները**

1. Շվեդիան իրավունք է վերապահում իրեն սահմանափակելու նամակագրական թղթակցության պատվիրված առաքանիների և հայտարարված արժեքով առաքանիների, ինչպես նաև Շվեդիա հասցեագրված՝ հայտարարված և չհայտարարված արժեքով ծանրոցների ներդրանքի արժեքը՝ ներքոհիշյալ աղյուսակում նշված առավելագույն սահմաններին համապատասխան:

1. Նամակագրական թղթակցության մտից առաքանիներ			
	Ներդրանքի առավելագույն առևտրային արժեքը	Առավելագույն հայտարարված արժեքը	Առավելագույն փոխհատուցումը
Պատվիրված առաքանիներ	500 ՀՓԻ	-	30 ՀՓԻ (M պարկեր. 150 ՀՓԻ)
Հայտարարված արժեքով առաքանիներ	4000 ՀՓԻ	4000 ՀՓԻ	4000 ՀՓԻ
2. Մտից ծանրոցներ			
	Ներդրանքի առավելագույն կոմերցիոն արժեքը	Առավելագույն հայտարարված արժեքը	Առավելագույն փոխհատուցումը
Չհայտարարված ծանրոցներ	արժեքով 4500 ՀՓԻ	-	40 ՀՓԻ՝ ծանրոցի համար + 4.50 ՀՓԻ՝ կիրգրամի համար

Այս սահմանափակումը չի կարող խախտվել արժեքի մասնավոր հայտարարումով, որը գերազանցում է 4000 ՀՓԻ-ն (նամակագրական թղթակցության առաքանիների համար) և 4500 ՀՓԻ-ն (փոստային ծանրոցների համար): Ոչ մի նոր սահմանափակում չկա պատվիրված առաքանու և հայտարարված արժեքով առաքանու ներդրանքի բնույթի վերաբերյալ: Առաքանիները, որոնց արժեքը գերազանցում է այս սահմանները, կվերադարձվեն տրման հիմնարկին:

Հոդված X

Ծանուցում ստանալու մասին

1. Կանադայի Փոստային ադմինիստրացիային թույլատրվում է ծանրոցների նկատմամբ չկիրառել 18-րդ հոդվածը, քանի որ նա չի ապահովում ծանրոցների ստացման մասին ծանուցման ծառայությունը իր ներքին ռեժիմում:

Հոդված XI

Պատասխանով միջազգային առևտրային թղթակցության ծառայությունը

1. Որպես բացառություն 21.1-ին հոդվածի՝ Վիետնամի Փոստային ադմինիստրացիան իր վրա չի վերցնում ՊՄԿԹ առաքումների վերադարձն ապահովելու պարտավորություն:

Հոդված XII

Արգելքներ (նամակագրական թղթակցություն)

1. Բացառության կարգով՝ Լիբանանի և Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետության Փոստային ադմինիստրացիաները չեն ընդունում պատվիրված առաքանիներ, որոնք պարունակում են մետաղադրամներ կամ թղթադրամներ, կամ հասցեագրված ցանկացած արժեք, կամ ճանապարհային վճարագրեր, կամ պլատին, ոսկի կամ մշակված կամ անմշակ արծաթ, թանկարժեք քարեր, թանկարժեք այլ իրեր: Նրանք պարտավոր չեն խստորեն պահպանելու Նամակագրական թղթակցության կանոնակարգի դրույթները՝ պատվիրված առաքանիների հափշտակման կամ վնասվածքի, ինչպես նաև ապակյա կամ փխրուն առարկաներ պարունակող առաքումների վերաբերյալ:

2. Բացառության կարգով՝ Սաուդյան Արաբիայի, Բուլիվիայի, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, բացառությամբ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանից, Իրաքի, Նեպալի, Պակիստանի, Սուդանի և Վիետնամի Փոստային ադմինիստրացիաները թույլ չեն տալիս մետաղադրամների, բանկային տոմսերի, վարկային տոմսերի կամ հասցեագրված որոշ արժեքների, ճանապարհային վճարագրերի, պլատինի, ոսկու և արծաթի՝ զարդեղենի կամ անմշակ տեսքով, թանկարժեք քարերի, ոսկերչական արտադրանքի և այլ արժեքավոր իրերի ներդրանքով պատվիրված առաքանիներ:

3. Մյանմայի Փոստային ադմինիստրացիան իրեն իրավունք է վերապահում չընդունել հայտարարված արժեքով առաքանիներ, որոնք պարունակում են 25.5-րդ հոդվածում նշված արժեքավոր իրերը, քանի որ նրա ներքին օրենսդրությունը թույլ չի տալիս նմանատիպ առաքանիներ:

4. Նեպալի Փոստային ադմինիստրացիան չի ընդունում պատվիրված կամ հայտարարված արժեքով առաքանիներ, որոնք պարունակում են թղթադրամներ կամ մետաղադրամներ, բացառությամբ հատուկ այս առիթով կնքված պայմանագրի:

5. Ուզբեկստանի Փոստային ադմինիստրացիան չի ընդունում պատվիրված առաքանիներ կամ հայտարարված արժեքով առաքանիներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, բանկային տոմսեր, վճարագրեր, փոստային նամականիշներ կամ տարադրամ, և ոչ մի պատասխանատվություն չի կրում այդ կարգի առաքանիների կորստի կամ վնասվածքի համար:

6. Իրանի (Իսլամական Հանրապետություն) Փոստային ադմինիստրացիան չի ընդունում առաքանիներ, որոնք պարունակում են իսլամական կրոնի սկզբունքներին հակասող առարկաներ:

7. Ֆիլիպինների Փոստային ադմինիստրացիան իրեն իրավունք է վերապահում չընդունել նամակագրական թղթակցության առաքանիներ (հասարակ, պատվիրված կամ հայտարարված արժեքով), որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ կամ հասցեագրված արժեթղթեր, ճանապարհային վճարագրեր, պլատին, ոսկի և արծաթ՝ զարդեղենի կամ անմշակ տեսքով, թանկարժեք քարեր և այլ արժեքավոր առարկաներ:

8. Ավստրալիայի Փոստային ադմինիստրացիան չի ընդունում ոչ մի փոստային առաքանի, որը պարունակում է ձուլածոներ կամ բանկային տոմսեր: Բացի այդ, նա չի ընդունում Ավստրալիա հասցեագրված պատվիրված առաքանիներ, ոչ էլ առաքանիներ, որոնք ուղարկվում են բաց տարանցումով, և որոնք պարունակում են արժեքավոր իրեր, ինչպիսիք են զարդերը, թանկարժեք մետաղները, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերը, արժեթղթերը, մետաղադրամները կամ այլ առարկաները, որոնք կարող են վաճառվել: Նա պատասխանատվություն չի կրում այն առաքանիների համար, որոնք ուղարկվել են փոստով՝ սույն վերապահման խախտումով:

9. Չինաստանի (Ժողովրդական Հանրապետություն) Փոստային ադմինիստրացիան, բացառությամբ հատուկ վարչական շրջան Հոնկոնգից, իր ներքին կանոնակարգին համապատասխան, չի ընդունում հայտարարված արժեքով առաքանիներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, բանկոտներ, թղթադրամներ կամ հասցեագրված ցանկացած արժեթուղթ, ճանապարհային վճարագրեր:

10. Լատվիայի և Մոնդոլիայի Փոստային ադմինիստրացիաները, իրենց ազգային օրենսդրության համապատասխան, իրենց իրավունք են վերապահում չընդունել հասարակ, պատվիրված կամ հայտարարված արժեքով առաքումներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, բանկոտներ, հասցեագրված արժեթղթեր և ճանապարհային վճարագրեր, քանի որ դա հակասում է ազգային օրենսդրությանը:

11. Բրազիլիայի Փոստային ադմինիստրացիան իրեն իրավունք է վերապահում չընդունել հասարակ, պատվիրված փոստ կամ հայտարարված արժեքով փոստ, որը պարունակում է մետաղադրամներ, շրջանառության մեջ գտնվող բանկային տոմսեր և հասցեագրված ցանկացած արժեք:

12. Վիետնամի Փոստային ադմինիստրացիան իրեն իրավունք է վերապահում չընդունել առարկաներ և ապրանքներ պարունակող նամակներ:

Հոդված XIII

Արգելքներ (փոստային ծանրոցներ)

1. Կանադայի, Մյանմայի և Չամբիայի Փոստային ադմինիստրացիաներն իրավունք ունեն թույլ չտալու հայտարարված արժեքով ծանրոցներ, որոնք պարունակում են 25.5.2-րդ հոդվածում նշված արժեքավոր առարկաները՝ այնքանով, որ դա հակասում է իրենց ներքին օրենսդրությանը:

2. Որպես բացառություն՝ Լիբանանի և Սուդանի Փոստային ադմինիստրացիաները չեն ընդունում ծանրոցներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ կամ հասցեագրված ցանկացած արժեք, ճանապարհային վճարագրեր, մշակված կամ չմշակված պլատին, ոսկի կամ արծաթ, թանկարժեք քարեր և այլ արժեքավոր առարկաներ կամ այնպիսի առարկաներ, որոնք պարունակում են հեղուկ նյութեր և հեշտությամբ հեղուկի փոխարկվող տարրեր, կամ ապակյա առարկաներ, կամ դրանց հավասարեցված առարկաներ, ինչպես նաև փխրուն առարկաներ: Նրանք պարտավոր չեն կատարելու Փոստային ծանրոցների կանոնակարգի համապատասխան դրույթները:

3. Բրազիլիայի Փոստային ադմինիստրացիան իրավունք ունի չընդունելու հայտարարված արժեքով ծանրոցներ, որոնք պարունակում են շրջանառության մեջ գտնվող մետաղադրամներ և բանկոտներ, ինչպես նաև հասցեագրված ցանկացած արժեթղթեր, նկատի ունենալով, որ դա արգելում է նրա ներքին կանոնակարգը:

4. Գանայի Փոստային ադմինիստրացիան իրավունք ունի չընդունելու հայտարարված արժեքով ծանրոցներ, որոնք պարունակում են շրջանառության մեջ գտնվող

մետաղադրամներ և բանկնոտներ՝ հաշվի առնելով, որ դա արգելում է նրա ներքին կանոնակարգը:

5. Բացի 25-րդ հոդվածում թվարկված առարկաներից՝ Սաուդյան Արաբիայի Փոստային ադմինիստրացիան չի ընդունում ծանրոցներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, բանկային տոմսեր կամ հասցեագրված ինչ-որ արժեքներ, ճանապարհային վճարագրեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ արտադրանքի կամ չմշակված տեսքով, թանկարժեք քարեր և այլ թանկարժեք առարկաներ: Նա չի ընդունում նաև ծանրոցներ, որոնք պարունակում են որևէ բուժանյութ, եթե միայն դա չունի իրավասու պաշտոնական մարմնի կողմից տրված բժշկական հրահանգավորում, կրակը մարելու համար նախատեսված նյութեր, քիմիական հեղուկներ կամ առարկաներ, որոնք հակասում են իսլամական կրոնի սկզբունքներին:

6. Բացի 25-րդ հոդվածում թվարկված առարկաներից՝ Օմանի Փոստային ադմինիստրացիան չի ընդունում ծանրոցներ, որոնք պարունակում են.

6.1. ցանկացած կարգի բուժանյութեր, եթե միայն դրանք չեն ուղեկցվում իրավասու պաշտոնական մարմնի կողմից տրված բժշկական դեղատոմսով.

6.2. կրակը մարելու համար նախատեսված առարկաներ և քիմիական հեղուկներ.

6.3. իսլամական կրոնի սկզբունքներին հակասող առարկաներ:

7. Ի լրումն 25-րդ հոդվածում թվարկված առարկաների՝ Իրանի (Իսլամական Հանրապետություն) Փոստային ադմինիստրացիան իրավունք ունի չթույլատրելու ծանրոցներ, որոնք պարունակում են իսլամական կրոնի սկզբունքներին հակասող առարկաներ:

8. Ֆիլիպինների Փոստային ադմինիստրացիան իրավունք ունի թույլ չտալու ծանրոցներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ կամ հասցեագրված ցանկացած արժեթուղթ, ճանապարհային վճարագրեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ արտադրանքի կամ անմշակ տեսքով, թանկարժեք քարեր կամ արժեքավոր այլ առարկաներ, կամ առարկաներ, որոնք պարունակում են հեղուկ նյութեր և հեշտությամբ հեղուկի փոխարկվող նյութեր, կամ սպակեղեն, կամ դրանց հավասարեցված առարկաներ, կամ փխրուն առարկաներ:

9. Ավստրալիայի Փոստային ադմինիստրացիան չի ընդունում ոչ մի փոստային առաքանի, որը պարունակում է ձուլակտորներ կամ բանկային տոմսեր:

10. Չինաստանի (Ժողովրդական Հանրապետություն) Փոստային ադմինիստրացիան չի ընդունում հասարակ ծանրոցներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ կամ հասցեագրված ցանկացած արժեթուղթ, ճանապարհային վճարագրեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ արտադրանքի կամ անմշակ տեսքով, թանկարժեք քարեր կամ այլ արժեքավոր առարկաներ: Բացի այդ, բացառությամբ Հոնկոնգի (հատուկ վարչական տարածաշրջան), նույնպես չի ընդունում հայտարարված արժեքով ծանրոցներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ կամ հասցեագրված ցանկացած արժեթուղթ և ճանապարհային վճարագիր:

11. Մոնղոլիայի Փոստային ադմինիստրացիան իրեն իրավունք է վերապահում, իր ազգային օրենսդրության համապատասխան, չընդունել ծանրոցներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, բանկային տոմսեր, հասցեագրված արժեթղթեր և ճանապարհային վճարագրեր:

12. Լատվիայի Փոստային ադմինիստրացիան չի ընդունում հասարակ ծանրոցներ և հայտարարված արժեքով ծանրոցներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, բանկային տոմսեր, հասցեագրված արժեթղթեր (վճարագրեր) կամ տարադրամ, և պատասխանատվություն չի կրում այդպիսի առաքանիների կորստի կամ վնասվածքի դեպքում:

Հոդված XIV

Մաքսատուրքերով հարկման ենթակա առարկաները

1. Հղում անելով 25-րդ հոդվածին՝ հետևյալ երկրների Փոստային ադմինիստրացիաները թույլ չեն տալիս հայտարարված արժեքով առաքումների ուղարկում մաքսատուրքերով հարկման ենթակա առարկաների ներդրանքով. Բանգլադեշ և Սալվադոր:

2. Հղում անելով 25-րդ հոդվածին՝ հետևյալ երկրների Փոստային ադմինիստրացիաները թույլ չեն տալիս հասարակ և պատվիրված մամակների առաքում մաքսատուրքերով հարկման ենթակա առարկաների ներդրանքով. Աֆղանստան, Ալբանիա, Ադրբեջան, Բելառուս, Կամբոջա, Չիլի, Կոլումբիա, Կուբա, Սալվադոր, Էստոնիա, Իտալիա, Լատվիա, Նեպալ, Ուզբեկստան, Պերու, Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն, Սան Մարինո, Թուրքմենստան, Ուկրաինա և Վենեսուելա:

3. Հղում անելով 25-րդ հոդվածին՝ հետևյալ երկրների Փոստային ադմինիստրացիաները թույլ չեն տալիս հասարակ մամակների առաքում մաքսատուրքերով հարկման ենթակա առարկաների ներդրանքով. Բենին, Բուրկինա Ֆասո, Կոտ դ'Իվուար, Ջիբութի, Մավրիտանիա և Վիետնամ:

4. Չնայած 1-3-րդ կետերի դրույթներին՝ շիճուկի, ինչպես նաև շտապ անհրաժեշտության՝ պակասուրդ բուժանյութերի ներդրանքով առաքանիները թույլատրվում են առաքման բոլոր դեպքերում:

Հոդված XV

Վերադարձը: Հասցեի փոփոխումը կամ ճշտումը

1. 29-րդ հոդվածը չի կիրառվում Անտիգուա և Բարբուդայի, Բահամների, Բահրեյնի, Բարբադոսի, Բելիզի, Բոտսվանայի, Բրունեյ Դարուսալամի, Կանադայի, Հոնկոնգի (Չինաստան), Դոմինիկայի, Ֆիջիի, Գամբիայի, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության և Հյուսիսային Իռլանդիայի, անդրծովյան տարածքներից այն մասերի նկատմամբ, որոնք կախված են Միացյալ Թագավորությունից, Գրենադայի, Գայանայի, Իրաքի, Իռլանդիայի, Յամայկայի, Քենիայի, Կիրիբատիի, Քուվեյթի, Լեաթոյի, Մալայզիայի, Մալավիի, Մյանմայի, Նաուրուի, Նիգերիայի, Նոր Զելանդիայի, Ուգանդայի, Պապուա-Նոր Գվինեայի, Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետության, Մենտ Զրիստոֆերի և Նևիսի, Մենտ Լյուսիի, Մենտ Վինսենտ և Գրենադինների, Սողոմոնի Կղզիների, Արևմտյան Սամուայի, Սեյշելյան Կղզիների, Սիեռա Լեոնեի, Սինգապուրի, Սվազիլենդի, Տանզանիայի, Տրինիդադի և Տոբագոյի, Տուվալուի, Վանուատուի և Չամբիայի նկատմամբ, որոնց օրենսդրությունը չի թույլատրում ուղարկողի խնդրանքով մամակագրական թղթակցության վերադարձ կամ հասցեի փոփոխություն:

2. 29-րդ հոդվածը կիրառվում է Ավստրալիայի նկատմամբ այն դեպքում, եթե այն չի հակասում այդ երկրի ներքին օրենսդրությանը:

3. Որպես բացառություն 29.4-րդ հոդվածի՝ Սալվադորին, Պանամային (Հանրապետություն), Ֆիլիպիններին և Վենեսուելային թույլատրվում է չվերադարձնել ծանրոցներն այն բանից հետո, երբ հասցեատերը խնդրել է կատարել այդ ծանրոցների մաքսային գնում. այնքանով, որքանով նրանց մաքսային օրենսդրությունն այդ թույլ չի տալիս:

Հոդված XVI

Բողոքագրերը

1. Որպես բացառություն 30.4-րդ հոդվածի՝ Սաուդյան Արաբիայի, Կաբո Վերդեի, Եգիպտոսի, Գաբոնի, Միացյալ Թագավորության անդրծովյան տարածքների, Հունաստանի, Իրանի (Իսլամական Հանրապետություն), Մոնղոլիայի, Մյանմայի, Ֆիլիպինների, Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետության, Սուդանի, Սիրիայի (Արաբական Հանրապետություն), Չադի, Ուկրաինայի և Չամբիայի Փոստային ադմինիստրացիաներն իրենց իրավունք են վերապահում հաճախորդներից գանձելու սակագին մամակագրական թղթակցության առաքանիների վերաբերյալ բողոքագրերի համար:

2. Որպես բացառություն 30.4-րդ հոդվածի՝ Արգենտինայի, Ավստրիայի, Սլովակիայի Չեխիայի Հանրապետության Փոստային ադմինիստրացիաներն իրենց իրավունք են վերապահում գանձելու հատուկ սակագին, եթե բողոքագրերի վերաբերյալ ձեռնարկված միջոցների արդյունքում պարզվել է, որ բողոքագիրը տրվել է անտեղի:

3. Աֆղանստանի, Սաուդյան Արաբիայի, Կաբո Վերդեի, Կոնգոյի (Հանրապետություն), Գաբոնի, Եգիպտոսի, Իրանի (Իսլամական Հանրապետություն),

Մոնղոլիայի, Մյանմայի, Սուդանի, Սուրինամի, Սիրիայի, Ուկրաինայի և Չամբիայի Փոստային ադմինիստրացիաներն իրենց իրավունք են վերապահում հաճախորդներից գանձելու սակագին ծանրոցների վերաբերյալ բողոքագրերի համար:

Հոդված XVII

Սակագին մաքսատուն ներկայացնելու համար

1. Գաբոնի Փոստային ադմինիստրացիան իրեն իրավունք է վերապահում իր հաճախորդներից գանձելու սակագին մաքսատուն ներկայացնելու համար:

2. Կոնգոյի (Հանրապետություն) և Չամբիայի Փոստային ադմինիստրացիաներն իրենց իրավունք են վերապահում հաճախորդներից գանձելու սակագին ծանրոցները մաքսատուն ներկայացնելու համար:

Հոդված XVIII

Փոստային ադմինիստրացիաների պատասխանատվությունը

1. Բանգլադեշի, Բենինի, Բուրկինա Ֆասոյի, Կոնգոյի (Հանրապետություն), Կոտ դ'Իվուարի, Ջիբութիի, Հնդկաստանի, Մադագասկարի, Մալիի, Մավրիտանիայի, Նեպալի, Նիգերի, Սենեգալի, Տոգոյի և Թուրքիայի Փոստային ադմինիստրացիաներին թույլատրվում է չկիրառել 34.1.1.1-ին հոդվածի դրույթները պատվիրված առաքանիների հափշտակության կամ վնասվածքի համար պատասխանատվության մասով:

2. Որպես բացառություն 34.1.1.1-ին և 35.1-ին հոդվածների՝ Չիլիի, Չինաստանի (Ժողովրդական Հանրապետություն), Կոլումբիայի և Եգիպտոսի Փոստային ադմինիստրացիաները պատասխանատվություն են կրում միայն պատվիրված առաքանիների ներդրանքի կորստի կամ ամբողջությամբ թալանի կամ լրիվ վնասվելու համար:

3. Որպես բացառություն 34-րդ հոդվածի՝ Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի Փոստային ադմինիստրացիաները ոչ մի պատասխանատվություն չեն կրում 25.5-րդ հոդվածում նշված առարկաները պարունակող առաքանիների կորստի կամ վնասվածքի համար:

4. Հնդկաստանի և Նեպալի Փոստային ադմինիստրացիաներն իրավունք ունեն չկիրառելու 34.1.1.1-ին հոդվածը հասարակ ծանրոցների հափշտակության կամ վնասվածքի դեպքում պատասխանատվության մասով:

Հոդված XIX

Վնասների փոխհատուցումը

1. Որպես բացառություն 34-րդ հոդվածի՝ ներքոշարադրյալ Փոստային ադմինիստրացիաներն իրավունք ունեն չվճարելու չհայտարարված արժեքով ծանրոցների համար վնասների փոխհատուցում, որոնք կորել, թալանվել կամ վնասվել են իրենց ծառայություններում. ԱՄՆ, Անգոլա, Անտիգուա և Բարբուդա, Ավստրալիա, Բահամյան Կղզիներ, Բանգլադեշ, Բարբադոս, Բելիզ, Բոլիվիա, Բոտսվանա, Բրունեյ, Դար Էսալամ, Կանադա, Դոմինիկայի Հանրապետություն, Դոմինիկա, Սալվադոր, Ֆիջի, Գամբիա, անդրծովյան տարածքներ, որոնք կախված են Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունից, որոնց ներքին կանոնները դա թույլ չեն տալիս, Գրենադա, Գվատեմալա, Գայանա, Կիրիբատի, Լեսոթո, Մալավի, Մալթա, Մավրիկիա, Նաուրու, Նիգերիա, Պապուա-Նոր Գվինեա, Ֆիլիպիններ, Սենտ Գրիստոֆեր և Նևիս, Սենտ Վինսենտ և Գրենադիններ, Սողոմոնի Կղզիներ, Սեյշելյան Կղզիներ, Սիեռա Լեոնե, Սվազիլենդ, Տրինիդադ և Տոբագո, Չամբիա և Չինբարվե:

2. Որպես բացառություն 34-րդ հոդվածի՝ Սաուդյան Արաբիայի, Արգենտինայի, Ավստրիայի, Բրազիլիայի, Հունաստանի, Չիլիի, Քենիայի, Լատվիայի, Մեքսիկայի, Օմանի, Ուզբեկստանի, Կատարի, Ռումինիայի, Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետության, Թուրքիայի, Ուկրաինայի և Վիետնամի Փոստային ադմինիստրացիաներն իրավունք ունեն չվճարելու իրենց ծառայությունում վնասված, կորած

կամ հափշտակված՝ չհայտարարված արժեքով ծանրոցների համար վնասների փոխհատուցում այն երկրներին, որոնք չեն վճարում այդ փոխհատուցումը՝ համաձայն սույն հոդվածի 1-ին կետի:

3. Որպես բացառություն 34.8-րդ հոդվածի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներին թույլատրվում է պահպանել հայտարարված արժեքով ծանրոցի վնասների հատուցման համար ուղարկողի իր իրավունքը հասցեատիրոջը հանձնելուց հետո՝ բացառությամբ այն դեպքի, երբ ուղարկողը հրաժարվում է իր իրավունքից՝ հոգուտ հասցեատիրոջ:

4. Ամերիկայի Միացյալ Նահանգներին, երբ նա հանդես են գալիս միջանկյալ Փոստային ադմինիստրացիայի դերում, թույլատրվում է չվճարել վնասների փոխհատուցում մյուս ադմինիստրացիաներին՝ հայտարարված արժեքով այն ծանրոցների կորստի, հափշտակության կամ վնասվածքի դեպքում, որոնք ուղարկվել են բաց տարանցումով կամ ուղարկվել են փակ ճեպագրերով:

5. Որպես բացառություն 34-րդ հոդվածի՝ Վիետնամի Փոստային ադմինիստրացիան իրավունք ունի չվճարելու փոխհատուցում մետաղադրամներ, հասցեագրված արժեթղթեր, ճանապարհային վճարագրեր, ինչպես նաև ոսկի, արծաթ և թանկարժեք քարեր պարունակող պատվիրված առաքանիների կորստի կամ վնասվածքի համար:

6. Չնայած 34-րդ հոդվածի դրույթներին՝ Կանադան իրավունք ունի հասարակ ծանրոցների գծով չվճարել փոխհատուցում, պատասխանատու չլինել կորստի, հափշտակության կամ մասնակի կամ ամբողջությամբ վնասվածքի համար և ուղարկողին չփոխհատուցել վճարված սակագները և գանձումները:

Հոդված XX

Բացառություններ պատասխանատվության սկզբունքից

1. Որպես բացառություն 34-րդ հոդվածի՝ Սաուդյան Արաբիային, Բոլիվիային, Եգիպտոսին, Իրաքին, Ֆիլիպիններին, Կոնգոյի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությանը, Սուդանին, Թուրքիային և Եմենին թույլատրվում է ոչ մի փոխհատուցում չվճարել այն ծանրոցների վնասվածքի համար, որոնք ուղարկվում են բոլոր երկրներից դեպի այդ երկրները և պարունակում են հեղուկներ և հեշտությամբ հեղուկ վիճակի փոխարկվող նյութեր, ապակե իրեր կամ համանման փխրուն կամ փչացող առարկաներ:

2. Որպես բացառություն 34-րդ հոդվածի՝ Սաուդյան Արաբիան և Սուդանն իրավունք ունեն չվճարելու փոխհատուցում 25.5-րդ հոդվածում հիշատակվող արգելված առարկաներ պարունակող ծանրոցների համար:

Հոդված XXI

Փոստային ադմինիստրացիաների պատասխանատվության դադարումը

1. Բոլիվիայի Փոստային ադմինիստրացիան պարտավոր չէ պահպանել 35.1-ին հոդվածը պատվիրված առաքանիների հափշտակության կամ վնասվածքի դեպքում պատասխանատվության պահպանման մասով:

2. Նեպալի Փոստային ադմինիստրացիային թույլատրվում է ծանրոցների վերաբերյալ չկիրառել 35.1.4-րդ հոդվածը:

Հոդված XXII

Փոխհատուցման վճարումը

1. Բանգլադեշի, Բոլիվիայի, Գվինեայի, Նեպալի և Նիգերիայի Փոստային ադմինիստրացիաները պարտավոր չեն պահպանել 37.3-րդ հոդվածը՝ երկու ամսվա ընթացքում վերջնական որոշումը ներկայացնելու կամ տրման կամ նշանակման ադմինիստրացիային տեղյակ պահելու մասով՝ կախված դեպքերից, որ նամակագրական թղթակցության առաքանին պահվել է, բռնագրավվել կամ ոչնչացվել իրավասու իշխանության կողմից կամ հանվել է՝ համաձայն նրա ներքին օրենսդրության:

2. Սաուդյան Արաբիայի, Կոնգոյի (Հանրապետություն) Ջիբութիի, Լիբանանի և Մադագասկարի Փոստային ադմինիստրացիաները պարտավոր չեն պահպանել 37.3-րդ

հողվածը՝ նամակագրական թղթակցության առաքանու վերաբերյալ բողոքագրի մասին երկու ամսվա ընթացքում վերջնական որոշում ներկայացնելու մասով: Նրանք, բացի դրանից, թույլ չեն տալիս, որ իրավունք ունեցող անձին իրենց հաշվին մեկ այլ ադմինիստրացիայի կողմից փոխհատուցում վճարվի վերոնշյալ ժամկետը լրանալուն պես:

3. Սաուդյան Արաբիայի, Անգոլայի, Գվինեայի և Լիբանանի Փոստային ադմինիստրացիաները պարտավոր չեն պահպանել 37.3-րդ հողվածը՝ ծանրոցի վերաբերյալ բողոքագրի հետ կապված երկամսյա ժամկետում վերջնական որոշում ընդունելու մասով: Բացի այդ, նրանք թույլ չեն տալիս, որ վերոնշյալ ժամկետը լրանալուց դրա իրավունքն ունեցող անձին փոխհատուցումը վճարվի իրենց փոխարեն մեկ այլ ադմինիստրացիայի կողմից:

4. Նիգերիայի և Թաիլանդի Փոստային ադմինիստրացիաները պարտավոր չեն պահպանել 37.3-րդ հողվածը այն մասով, որը վերաբերում է հեռաձայնային իրենց ուղարկված բողոքագրի մասին 30 օրվա ընթացքում վերջնական որոշում ընդունելուն: Նրանք առավել ևս համաձայն չեն, որ մեկ այլ ադմինիստրացիա վերոհիշյալ ժամկետը լրանալուց հետո իր անունից դիմումատուին վճարի փոխհատուցում:

5. Չնայած 37.3-րդ հողվածի դրույթներին՝ ԱՄՆ-ը և Մալայզիան պահպանում են բողոքագրերի վերաբերյալ դրանք ներկայացնելուց հետո երկու ամսվա ընթացքում վերջնական որոշում ընդունելու իրավունքը, ինչպիսին էլ լինեն դրանք ուղարկելու համար օգտագործվող միջոցները:

Հողված XXIII

Արտասահման նամակագրական թղթակցության առաքանիների ուղարկումը

1. ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության և Հունաստանի Փոստային ադմինիստրացիաներն իրենց իրավունք են վերապահում, աշխատանքի կատարման արժեքին համապատասխան, սակագին գանձելու ցանկացած Փոստային ադմինիստրացիայից, որը, համաձայն 43.4-րդ հողվածի, վերադարձնում է նրան այն առաքանիները, որոնք տրվելիս իրենց ծառայությունների կողմից չեն ուղարկվել որպես փոստային առաքանիներ:

2. Որպես բացառություն 43.4-րդ հողվածի՝ Կանադայի Փոստային ադմինիստրացիան իրեն իրավունք է վերապահում տրման ադմինիստրացիայից գանձելու փոխհատուցում, որը թույլ կտա իրեն նվազագույն չափով ծածկելու այդպիսի առաքանիների մշակման հետ կապված ծախսերը:

3. 43.4-րդ հողվածը նշանակման Փոստային ադմինիստրացիային թույլ է տալիս տրման ադմինիստրացիայից պահանջելու փոխհատուցում արտասահման մեծ քանակությամբ ուղարկված նամակագրական թղթակցության առաքանիները տեղ հասցնելու համար: Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունն իրեն իրավունք է վերապահում այս գումարի վճարումը սահմանափակել նշանակման երկրի ներքին սակագնով, որը կիրառվում է նմանատիպ առաքանիների նկատմամբ:

4. 43.4-րդ հողվածը նշանակման Փոստային ադմինիստրացիային թույլ է տալիս տրման ադմինիստրացիայից պահանջելու փոխհատուցում արտասահման մեծ քանակությամբ ուղարկված նամակագրական թղթակցության առաքանիները տեղ հասցնելու համար: Հետևյալ երկրներն իրենց իրավունք են վերապահում Կանոնակարգով թույլատրված սահմաններով սահմանափակել այդ գումարի վճարումը մեծ քանակությամբ տրված առաքանիների համար. ԱՄՆ, Ավստրալիա, Բահամներ, Բարբադոս, Բրունեյ Դարուսալամ, Չինաստան (Ժողովրդական Հանրապետություն), Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունից կախված անդրծովյան տարածքներ, Գրենադա, Գայանա, Հնդկաստան, Մալայզիա, Նեպալ, Նոր Զելանդիա, Նիդերլանդներ, Նիդերլանդական Անտիլյան և Արուբա, Սենտ Լյուսիա, Սենտ Վինսենտ և Գրենադիներ, Սինգապուր, Շրի Լանկա, Սուրինամ և Թաիլանդ:

5. Չնայած 4-րդ կետում բերված վերապահումներին՝ հետևյալ երկրներն իրենց իրավունք են վերապահում ամբողջությամբ կիրառել Կոնվենցիայի 43-րդ հողվածի դրույթները Միության անդամ երկրներից ստացված փոստի նկատմամբ. Գերմանիա, Սաուդյան Արաբիա, Արգենտինա, Բենին, Բրազիլիա, Բուրկինա Գասո, Կամերուն, Կիպրոս,

Կոտ դժվուար (Հանրապետություն), Եգիպտոս, Ֆրանսիա, Հունաստան, Գվինեա, Իսրայել, Իտալիա, Ճապոնիա, Հորդանան, Լիբանան, Մալի, Մարոկկո, Մավրիտանիա, Մոնակո, Պորտուգալիա, Սենեգալ, Սիրիա, Տոգո:

6. 43.4-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ Գերմանիայի Փոստային ադմինիստրացիան իրեն իրավունք է վերապահում ուղարկող երկրի Փոստային ադմինիստրացիայից պահանջելու վճարել փոխհատուցում այն գումարի չափով, որը նա կստանար այն երկրի Փոստային ադմինիստրացիայից, որտեղ ապրում է ուղարկողը:

Հոդված XXIV

Վերջնական ծախսեր

1. Որպես բացառություն 49.1.3-րդ և 51.1.3-րդ հոդվածների՝ Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Լատվիայի, Քուվեյթի, Օմանի, Կատարի, Սիրիայի (Արաբական Հանրապետություն) և Վիետնամի Փոստային ադմինիստրացիաները պարտավոր չեն վճարել լրացուցիչ փոխհատուցում իրենց իսկ երկրներից դուրս եկող նամակագրական թղթակցության պատվիրված առաքանիները տեղ հասցնելու համար:

2. Որպես բացառություն 49.1.3-րդ և 51.1.3-րդ հոդվածների՝ Չիբուքիի, Գանայի, Հնդկաստանի, Նեպալի և Եմենի Փոստային ադմինիստրացիաները պարտավոր չեն վճարել լրացուցիչ փոխհատուցում իրենց իսկ երկրներից դուրս եկող նամակագրական թղթակցության հայտարարված արժեքով առաքանիները տեղ հասցնելու համար:

3. Չնայած 49.1.3-րդ և 51.1.3-րդ հոդվածների վերաբերյալ երկրների կողմից արված վերապահումներին՝ Ավստրալիայի Փոստային ադմինիստրացիան չի պահանջում ստորագրություններ պատվիրված առաքանիների համար, որոնք տեղ հասցնելու համար լրացուցիչ վճարում չի կատարվել:

4. Պատվիրված առաքանիների և հայտարարված արժեքով առաքանիների համար լրացուցիչ փոխհատուցում նախատեսող 49.1.3-րդ և 51.1.3-րդ հոդվածներից բխող պարտավորությունների վերաբերյալ վերապահումներ ներկայացրած երկրների նկատմամբ ԱՄՆ-ն իրեն իրավունք է վերապահում մշակել այդ առաքանիները որպես հասարակ փոստ և փոխհատուցում չփոխանցել այդ կարգի առաքանու կորստի, հափշտակման կամ վնասվածքի դեպքում, որոնք կարող են տեղի ունենալ իրենց ծառայությունում:

5. Չնայած XXIV հոդվածի վերաբերյալ ընդունված վերապահումներին՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը և Միացյալ Թագավորությունից կախված անդրծովյան տարածքները իրենց իրավունք են վերապահում ամբողջ ծավալով կիրառել Պեկինի Համագումարի կողմից հավանության արժանացած դրույթները այլ երկրների հետ իրենց փոստափոխանակման մեջ նամակագրական թղթակցության՝ պատվիրված և հայտարարված արժեքով առաքանիները տեղ հասցնելու համար լրացուցիչ փոխհատուցում գանձելու բնագավառում:

6. Չնայած XXIV.1 և 2-րդ հոդվածի նկատմամբ կիրառված վերապահումներին՝ ներքոթվարկյալ անդամ երկրներն իրենց իրավունք են վերապահում այդ վերապահումները ստորագրած երկրների հետ փոխադարձ կապերում կիրառել Պեկինի Համագումարի կողմից հավանության արժանացած նամակագրական թղթակցության պատվիրված առաքանիները տեղ հասցնելու համար լրացուցիչ փոխհատուցում. Ավստրալիա, Բահամյան Կղզիներ, Բարբադոս, Բելիզ, Բենին, Բոլիվիա, Բրազիլիա, Բուրկինա Ֆասո, Կամերուն, Կանադա, Չիլի, Կոստա Ռիկա, Կոտ դժվուար (Հանրապետություն), Կուբա, Դոմինիկայի Հանրապետություն, Դոմինիկա, Մալվադոր, Իսպանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գաբոն, Հունաստան, Գրենադա, Գվատեմալա, Գայանա, Հայիթի, Հոնդուրաս (Հանրապետություն), Յամայկա, Մալի, Մավրիտանիա, Մեքսիկա, Նիկարագուա, Լեհաստան (Հանրապետություն), Սենտ Բրիստոֆ (Սենտ Բիտս) և Նևիս, Սենտ Լյուսիա, Սենտ Վինսենտ և Գրենադիներ, Սենեգալ, Սուրինամ, Տրինիդադ և Տոբագո, Ուրուգվայ, Հարավային Աֆրիկա, Բուլղարիա, Կաբո Վերդե, Եգիպտոս, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Միացյալ Թագավորությունից կախված անդրծովյան տարածքներ, Իսլանդիա, Իտալիա, Ճապոնիա, Լիխտենշտայն,

Մալաթիա, Մարոկկո, Մոլդովա, Նիդերլանդներ, Պերու, Սինգապուր, Սլովակիա, Սուդան, Շվեդիա, Շվեյցարիա, Չեխիա (Հանրապետություն), Թունիս, Վենեսուելա:

7. Իր C46/1999 որոշումով Համագումարը հանձնարարում է Փոստային շահագործման խորհրդին մինչև 2002 թ. մշակել ներքին սակագները և/կամ Փոստային ադմինիստրացիաների ծախսերը վերջնական ծախսերի գծով սակագների փոխադրելու բանաձևը և սահմանել 2004 և 2005 թթ. համար ներքին սակագների վերջնական տոկոսը: Այն դեպքում, երբ հրահանգը սահմանված ժամկետներում չիրականացվի, Գերմանիան իրավունք է վերապահում իրեն 48.3-րդ հոդվածի համաձայն սահմանել 2004 և 2005 թթ. համար տոկոսներ՝ այդ հոդվածում թվարկված սկզբունքներին համապատասխան:

8. Իր C46/1999 որոշումով Համագումարը հանձնարարում է Փոստային շահագործման խորհրդին մինչև 2002 թ. մշակել սակագները կամ Փոստային ադմինիստրացիաների ներքին ծախսերը վերջնական ծախսերի սակագների փոխադրելու բանաձևը և որոշել 2004 և 2005 թթ. համար կիրառվող ներքին սակագների վերջնական տոկոսը: Չնայած XXIV. 7 հոդվածին, որի հիման վրա երկիրն իրավունք է վերապահում իրեն, որ ինքը որոշի այդ տոկոսը 2004 և 2005 թթ. համար, համաձայն 48.3-րդ հոդվածի՝ այն դեպքում, եթե ՓՇԽ-ն չկատարի C46/1999 որոշումը, ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը և Նիդերլանդներն իրավունք են վերապահում շարունակել կիրառել վերջնական ծախսերի սակագները, որոնք հիմնված են 2001-2003 թթ. համար գործող ներքին սակագները վերջնական ծախսերի սակագների փոխադրելու մեթոդի և տոկոսի վրա՝ պայմանով, որ կնքված լինի փոխադարձ պայմանավորվածությանը համապատասխան վերջնական ծախսերի տարբեր սակագների կիրառումը նախատեսող պայմանագիր կամ, եթե ՓՇԽ-ն որոշել է ներքին սակագների նոր տոկոս, որը պետք է կիրառվի 2004 և 2005 թթ. համար:

9. Գերմանիայի Փոստային ադմինիստրացիան իրավունք է վերապահում իրեն, որ ինքը կառավարի 50.1.1.1-ին հոդվածին համապատասխան զարգացող երկրներում ծառայության որակի բարելավման հիմնադրամի համար տրամադրված ֆինանսական ռեսուրսները այնքան ժամանակ, մինչև իրականացվեն ՓՇԽ կողմից հաստատված՝ տվյալ հիմնադրամի ադմինիստրատիվ, ֆինանսական և ընթացակարգային կառուցվածքի վերաբերյալ սկզբունքները:

10. ԱՄՆ-ն հավանություն է տալիս 47-51-րդ հոդվածներում սահմանված վերջնական ծախսերի համակարգին: Սակայն Համաշխարհային առևտրային կազմակերպության անդամների նկատմամբ ԱՄՆ-ն իրավունք է վերապահում իրեն կիրառել վերջնական ծախսերի գծով տվյալ պայմանավորվածությունները՝ առևտրի վերաբերյալ Գլխավոր համաձայնագիրը շոշափող՝ ծառայությունների կողմից ապագա բանակցություններում ընդունված դրույթներին համապատասխան:

11. Չնայած XXIV հոդվածի նկատմամբ ընդունված վերապահումներին՝ ներքոհիշյալ անդամ երկրներն իրավունք են վերապահում իրենց այդ վերապահումները ստորագրած երկրների հետ փոխադարձ կապերում ամբողջությամբ կիրառել վերջնական ծախսերի բնագավառում Պեկինի Համագումարի կողմից հավանության արժանացած դրույթները. Ավստրիա, Բահամյան Կղզիներ, Բարբադոս, Բելիզ, Բենին, Բոլիվիա, Բրազիլիա, Բուրկինա Ֆասո, Կամերուն, Կանադա, Չիլի, Կոնգո (Հանրապետություն), Կուբա, Դոմինիկայի Հանրապետություն, Դոմինիկներ, Սալվադոր, Էկվադոր, Իսպանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գաբոն, Հունաստան, Գրենադա, Գվատեմալա, Գայանա, Լեհաստան (Հանրապետություն), Պորտուգալիա, Սենտ Զրիստոֆ (Սենտ Զիտս) և Նևիս, Սենտ Լյուսիա, Սենտ Վինսենտ և Գրենադիներ, Սենեգալ, Սուրինամ, Տրինիդադ և Տոբագո, Ուրուգվայ, Հարավային Աֆրիկա, Բուլղարիա, Եգիպտոս, Իտալիա, Քենիա, Լիխտենշտայն, Մարոկկո, Մոլդովա, Նիդերլանդներ, Պերու, Սլովակիա, Սուդան, Շվեդիա, Շվեյցարիա, Չեխիա (Հանրապետություն), Թունիս, Վենեսուելա:

Հոդված XXV

Ներքին օդային փոխադրումների հետ կապված ծախսերը

1. Որպես բացառություն 53.3-րդ հոդվածի՝ Սաուդյան Արաբիայի, Բահամյան Կղզիների, Կաբո Վերդեի, Կոնգոյի (Հանրապետություն), Դոմինիկայի Հանրապետության,

Սավադորի, Էկվադորի, Գաբոնի, Հունաստանի, Գվատեմալայի, Գայանայի, Հոնդուրասի, Մոնղոլիայի, Նեպալի, Պապուա-Նոր Գվինեայի, Պերուի, Ֆիլիպինների, Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետության, Սողոմոնի Կղզիների և Վանուատուի Փոստային ադմինիստրացիաներն իրավունք են վերապահում իրենց գանձելու վճար երկրի ներսում օդային ճանապարհով միջազգային ճեպագրերով առաքման համար:

2. Որպես բացառություն 53.3-րդ հոդվածի՝ Մյանմայի Փոստային ադմինիստրացիան իրավունք է վերապահում իրեն գանձելու վճար երկրի ներսում միջազգային ճեպագրերի ուղարկման համար՝ անկախ այն բանից՝ ուղարկվում են դրանք ավիատղիներով, թե ոչ:

3. Որպես բացառություն 53.3-րդ հոդվածի՝ Բանգլադեշի Փոստային ադմինիստրացիան իրավունք է վերապահում իրեն գանձելու վճար երկրի ներսում միջազգային ճեպագրերի առաքման ծախսերի համար՝ անկախ այն բանից՝ վերառաքվում են այդ ճեպագրերը ավիատղիներով, թե ոչ, և անկախ անցած տարածությունից:

4. Որպես բացառություն 53.4-րդ և 53.5-րդ հոդվածների՝ ԱՄՆ-ի, Կանադայի, Իրանի (Իսլամական Հանրապետություն) և Թուրքիայի Փոստային ադմինիստրացիաներին թույլատրվում է որպես միասնական սակագին համապատասխան Փոստային ադմինիստրացիաներից գանձել ցանկացած այն ադմինիստրացիայից ստացվող մտից փոստի հետ կապված ներքին ավիափոխադրումների համար իր ծախսերը, որի համար նրանք կիրառում են միայն ծախսերի կամ ներքին սակագների վրա հիմնված վերջնական ծախսերի համար հատուցում:

5. Օմանի Փոստային ադմինիստրացիան փոխադարձության հիման վրա իրավունք ունի 1-3-րդ կետերում հիշատակված Փոստային ադմինիստրացիաներից գանձելու իր երկրի ներսում այդ ադմինիստրացիաներից ստացվող նամակագրական թղթակցության ճեպագրերի օդային փոխադրումների հետ կապված լրացուցիչ ծախսեր՝ անկախ այն բանից՝ իրականացվում է այդպիսի ճեպագրերի առաքումը օդային, թե մեկ այլ ճանապարհով:

Հոդված XXVI

Սակագների մտից ցամաքային բացառիկ մասերը

1. Որպես բացառություն 56-րդ հոդվածի՝ Աֆղանստանի Փոստային ադմինիստրացիան իրավունք է վերապահում իրեն գանձելու լրացուցիչ սակագնի ցամաքային լրացուցիչ մաս մտից ծանրոցների համար՝ յուրաքանչյուր ծանրոցի համար 7.50 ՀՓԻ չափով:

Հոդված XXVII

Հատուկ սակագներ

1. ԱՄՆ-ի, Բելգիայի և Նորվեգիայի Փոստային ադմինիստրացիաներն իրավունք ունեն ավիածանրոցների համար գանձելու ավելի բարձր սակագնի ցամաքային մասեր, քան ցամաքային ծանրոցների համար:

2. Լիբանանի Փոստային ադմինիստրացիան իրավունք ունի մինչև մեկ կգ քաշով ծանրոցների համար գանձելու սակագին, որը կիրառվում է 1-ից մինչև 3 կգ քաշից բարձր ծանրոցների համար:

3. Պանամայի (Հանրապետություն) Փոստային ադմինիստրացիային թույլատրվում է գանձելու 0.20 ՀՓԻ՝ օդային ճանապարհով (S.A.L.) փոխադրվող տարանցիկ ցամաքային ծանրոցների յուրաքանչյուր կիլոգրամի համար:

Ի հավաստումն որի՝ ներքոհիշյալ լիազորված ներկայացուցիչները կազմեցին սույն Արձանագրությունը, որը կունենա նույն ուժը և նույն նշանակությունը այնպես, ինչպես, եթե դրա դրույթները ներառվեին Կոնվենցիայի տեքստում, և ստորագրեցին այն մեկ օրինակով, որը ի պահ կտրվի Միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին: Պատճենը Համագումարի անցկացման երկրի Կառավարության կողմից կփոխանցվի յուրաքանչյուր կողմի:

Կատարված է Պեկինում 1999 թ. սեպտեմբերի 15-ին: